

ՆԻԿՈՂՈՍ ԹԱՀՄԻԶՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԳԱՊԱՍԱՔԱԼՅԱՆԻ «ՀԱՄԱՌՈՏԻԹԻՒՆ
ԵՐԱԺՇՏԱԿԱՆԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ» ԱՆՏԻՊ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Մաշտոցի անվան Մատենադարանի № 3080 ձեռագրում ընդօրինակված է առաջին հայացքից մի անհայտ հեղինակի երաժշտագիտական գործը, որը սակայն, իրականում, պատկանում է կեսարացի Գրիգոր ղպիկ Գապասաքալյանի (1740—1808) գրչին: Այն, լրացնելով մեր տեսաբանի ու նրա ժառանգության մասին առկա տվյալները, նաև շահեկան նորույթ է բերում իր հետ: Զեռագիրը (125 թերթ. թուղթ՝ 19,4×14,5. միասյուն նոտրգիր) մի կազմի մեջ ներփակում է երեք տարրեր միավորներ, արտագրված տարրեր ժամանակ ու տարրեր գրիշների կողմից: Դրանք են՝ 1. Սիրուն զրոսարան, յօտարէն փոխեց ի հայ Գր. Պոլսեցի (էջ 2ա—33թ), 2. Բժշկարան, յորում պարունակին անուանք ընտիր և օդտակար գեղօրէից... (էջ 38ա—94թ) և 3. Համառոտութիւն երաժշտականի գիտութեան հարց և պատասխանատութեանց, շարադրեցեալ յումեմնէ բանասիրէ ի փառս ամենակալին աստուծոյ և յօդուտ ազգիս արամեանս (էջ 96ա—124թ):

«Սիրուն զրոսարանը» արտագրված է բոլորովին նոր թղթի վրա: Ավելի հին է «Բժշկարանի» թուղթը, և առավել հին ու իր շափսերով ևս փոքր-ինչ տարրեր՝ մեզ հետաքրքրող «Համառոտութիւն երաժշտականի» թուղթը: Թվական և հիշատակարան ունի միայն «Սիրուն զրոսարանը»: Պարզվում է, որ թարգմանության նախագաղափար օրինակը գրված է եղել 1827 թվականին, իսկ արտագրությունը կատարվել է 1851-ին¹: Ակներե է, որ վերջին թվականը ցույց է տալիս նաև վերոհիշյալ երեք աշխատությունները մի կազմի մեջ ամփոփելու մոտավոր ժամանակը:

Ամփոփելով Գապասաքալյանի ժառանգության մասին հայտնի բոլոր տվյալները, այժմ կարելի է ասել, որ նա հեղինակ է երաժշտագիտական շորս աշխատության: Դրանցից իր կենդանության օրոք հրատարակվել են առաջինը («Գրքոյն որ կոչի նուազարան», Կ. Պոլիս, 1794) և երրորդը («Գիրք երաժշտական», Կ. Պոլիս, 1803)²: Չորրորդ աշխատության ձեռագիրը, որ հե-

1 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 3080, էջ 2ա (գրչագրին ու նրա բովանդակած երաժշտագիտական աշխատությանն ընդհանուր առմամբ ծանոթ են եղել Սպ. Մելիքյանը (տե՛ս նրա «Հունական ազդեցությունը հայ երաժշտության տեսականի վրա», Թիֆլիս, 1914, էջ 26) և Ռ. Աբաբյանը («Ճմտ. նրա «Գրիգոր Գապասաքալյանը և խաղարանությունը» հոդվածը. «Բանբեր Մատենադարանի», 1960, № 5, էջ 165):

2 «Գիրք երաժշտականին» կից հրատարակված «Նուազարան երաժշտականը» թեև ինքնուրույն միավոր է, սակայն երաժշտա-տեսական հատուկ բաժին չունի և փոքրիկ երգարան է պարզապես: Նույնը պիտի ասել նաև դարձյալ 1803-ին տպագրված «Գրքոյն կոչեցեալ երգարան» հատորի վերաբերյալ, որովհետև որա երաժշտա-տեսական բաժինը գրադեցնում է 160 էջանոց մատյանի երկու թերթը միայն, հնուապնդելով երաժշտության մասին մեկ ընդհանուր ծանոթություն տալու նպատակը («Ցաղացն երաժշտական թէ զինչ է»):

դինակի մասին տեղեկություն չի պարունակել, անցյալ դարի վերջերին պահպել է Կեսարիայի և Դանիելի վանքի մատնադարանում։ Տրդտ. եսլ. Պալյանը ժամանակին նկարագրել ու հատվածաբար ներկայացրել է այն գիտական հասարակայնությանը³։ Նա բարձրացրել է նաև աշխատության հեղինակային պատկանելության հարցը, և քիչ անց հանգել համոզման, որ դա Գր. Գալասարալյանի դործն է, հանդիսանում է նրա «Գիրք երաժշտականի» բովանդակության ընդարձակ շարադրանքը, որ կատարվել է համաձայն նախապես տրված խոստման՝ շուրջ 1805-ին⁴։ Յավոք, Կեսարիայի և Դանիելի վանքի մատնադարանի հայկական 85 ձեռագրերի հետ միասին (որոնք նկարագրած է եղել Տրդտ. Պալյանը)⁵, առաջին աշխարհամարտի ժամանակ անդարձ կորել է նաև Գր. Գալասարալյանի այդ երկը։ Իսկ նրա երկրորդ աշխատությունը ընթերցողի ուշադրությանը հանձնվող այս հարցարանն է (կատեխիզիս) «Համառութիւն երաժշտականի գիտութեան» խորագրով։

Համեմատությունը ցույց է տալիս, որ այն ունենալով շարադրության լոկ իրեն հատուկ նպատակային թերումը, միևնույն ժամանակ լեզվով, մտածելակերպով, բովանդակությամբ, նյութի ընդգրկմամբ ու դասակարգման սկզբունքով մի կողմից հետագա մշակումն է «Գրքոյն որ կոչի նուագարանի» երաժշտա-տեսական բաժնի, և մյուս կողմից՝ անմիջական նախապատրաստումը «Գիրք երաժշտականի», ուստի գրված պետք է լինի 1794-ի և 1803-ի միջոցին, հավանաբար 1799—1800 թվականներին։

«Գրքոյն որ կոչի նուագարան» աշխատության մեջ, որ Գալասարալյանի երաժշտագիտական առաջին երկասիրությունն է⁶, հեղինակը օգտվելով Աստվածաշնչից, Դավիթ Անհաղթի «Սահմանքից», նրա միջնադարյան մեկնություններից, Գրիգոր Տաթևացու «Հարցմանց զրքից» ու զրշագրերում պահպանված մի քանի փոքր հոդվածներից՝ խոսում է երաժշտության ծագման, նրա ներգործության ուժի և աշխարհիկ ու եկեղեցական ստորարաֆանումների մասին, շոշափում է ձայների տեսակների, ձայնեղանակների առաջացման ու նվազարանների ստեղծման խնդիրները, վերջապես բարձրացնում է հայ երաժշտության ձայնեղանակների, շափակշուրջի և խաղաղրության հարցերը⁷։ Աշխատությունը զերծ չէ թերություններից⁸։ Նրա խաղարանական մասի ան-

³ Տրդտ. Պալյան, Հայկական երաժշտության նորագյուտ դասագիրը մը, «Հանդիս ամսորյա», 1895, № 3, էջ 65, № 4, էջ 123։

⁴ «Հանդիս ամսորյա», 1896, № 12, էջ 353։

⁵ Ա. Քոլանչյան, Մեր ձեռագրական կորուստները, «Եղմիածին», 1966, № 9—10, էջ 90։

⁶ Առաջարանի մեջ հեղինակը խնդրում է «անրասիր առնել դմերն համբակութիւն... զի առաջին պատուի մեր է, որպէս թէ ի նոր տնկոյն նոր ժաղիկ և նորահաս պատուի» («Գրքոյն որ կոչի նուագարան», էջ 6—7)։

⁷ Երաժշտության տեսաբանը այսուհետ (ինչպես իր մյուս աշխատություններում) փորձ է կատարում դուրս բերել խաղաղրության արվեստը ճպնաժամային վիճակից, օգտվելով զինավորապես բյուզանդական նևմադրության սկզբունքներից, և նրա համար, որ՝ հեղինակի խոսքերով առաջ՝ հայ դպիրները որարելուր ձայնի ոգեալ վերերգեստները, յետո կացեալի միամիւրի կոչեցեալն երաժշտականէ արհեստէ ալլաղղեաց» (էջ 6), որ ուշագրավ դիտողություն է, ինչպես նկատեց Ա. Ալպոյանը (տե՛ս նրա՝ «Պատմություն հայ Կեսարիո», Հատ. Բ, Գահիրե, 1937, էջ 1583)։

⁸ Թե՛ խաղաղրության, և թե՛ ընդհանրապես տեսության հարցերում հեղինակը, չնայած օրինակելի շանասիրությամբ ձգում է հարարերակցել հայ երաժշտության փաստերը պարակա-արական և բյուզանդական երաժշտարվեստների համապատասխան երեւյնների հետ, բայց ոչ բավականաշատ հստակ կողմնարոշմամբ։

կատարությունը զգացել է Հեղինակն ինքը և «Գրքոյիկի» հիշատակարանում տեղեկացրել, որ «Եթե տէր հրամայեսցէ իւր տիեզերածաւալ և ամենակարօդ զօրութեամբն, ի լրումն հասուցանելոյ ձեռնամուխ լիալ եմք»⁹: Բայց խնդիրը միայն դրա մեջ չէ: «Գրքոյիկի» երաժշտա-տեսական բաժնի բովանդակությունը շարադրված է անկարգ-անսխոտեմ:

Երաժշտագիտական իր մյուս աշխատություններում Գալասարալյանը հիմնականում պահպանեց տեսական խնդիրների նույն միակցությունը, բայց ավելի մշակեց այն, ընդլայնեց, խորացրեց, առավ դիտական համակարգի տակ, իսկ ամբողջական գրվածքներին հաղորդեց նպատակային նոր թեքումներ: Դա երեսում է, մասնավորապես, Գալասարալյանի հրատարակվող երկից ևս:

Աշխատության առաջին երեք գլուխներում Հեղինակը ընթերցողի առաջ պարզում է իր ժամանակի ու միշտավորի երաժշտա-գեղագիտական ըմբռնումները: Խոսում է երաժշտական արվեստի ծագման շուրջ, այն կապելով Հին Հրեական և Հին Հունական մի քանի (իրական թե առասպելական) երգիշ-բանաստեղծների գործունեությանը. անդրադառնում է երաժշտության ներգործության ուժի խնդրին, վերջապես բարձրացնում է աշխարհիկ ու հոգևոր երգարվեստի և առարկայական իրականության հարաբերության անկյունաքարային հարցը, արտահայտելով արվեստի փիլիսոփայության բնագավառում հայ եկեղեցու ուշ միջնադարյան դիրքորոշումը (և աշխարհիկ երդ-երաժշտության հանդեպ նրա որդեգրած նոր, հանդուրժողական վերաբերմունքը):

Աշխատության մյուս գլուխները նվիրված են զուտ տեսական հարցերի՝ հայոց ութ-ձայնի համակարգին, շափակշուրջային դրությանը և խազագրությանը:

Ութ-ձայնի համակարգի առնչությամբ բարձրացվող խնդիրներից մի-երկուսը առանձնապես ուշագրավ են: Կարեոր պարագա է, որ Գալասարալյանը զանազանում է ձայնեղանակների լրիվ անվանակոչությունները («առաջին ձայն», «երկրորդ ձայն» և այլն)՝ որպես «անուանք ձայնից»՝ դրանց գրության լոկ կրճատ կարծեցյալ ձևերից («աձ», «բձ» և այլն), վերջիններս համարելով «նշանագիծք ձայնից», այսինքն՝ յուրատեսակ խազանշաններ¹⁰: Այնուհետև, Հեղինակն առանձին գլուխ է նվիրում այսպես կոչված «Հին» ձայնեղանակների խնդրին (թեպետև դրա լուծումը նա որոնում է շատ հեռուներում¹¹). և

⁹ «Գրքոյիկ որ կոչի նուազարան», էջ 423:

¹⁰ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս մեր «Կոմիտասը և հայկական խաղերի վերծանության խնդիրը» հոդվածը, «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4, էջ 39—41):

¹¹ Մասնավորապես՝ միջնադարյան մատենագրության այն հատակոտըներում, ուր, երաժշտական ձայների ու ձայնեղանակների ծագումնաբանության կապակցությամբ, խօսվում է առասպելական երաժիշտության ժամանակներին վերաբերող գործունեության մասին (ձեռադրական այդ հատակոտըների նշանակությունը բացահայտված է մեր «Քննական տեսություն հայոց Հին» և միջնադարյան երաժշտության պատմությանը հոդվածում (տե՛ս ԳԱ «Երաբեր», 1970, № 10, էջ 23—29, և 1971, № 1, էջ 53—55): Տակամին XIV դարում ունեցել ենք տեսարաններ, որոնք ձգուել են՝ հայկական ութ-ձայնի իրենց ժամանակակից պատկերը համեմատության մեջ զնել՝ նույն ութ-ձայնի վաղ միջնադարյան դրության հետ (հմմտ. մեր «Ներդաշնակության հենքի մասին ուսմունքը Հայաստանում միջին դարերում» հոդվածը, «Բանրեր Մատենադարանի», № 8, 1967, էջ 103—104):

բացատրում է, որ ինչպես արևելյան ու բյուզանդական հիմնական եղանակները, նույնպես և հայկականները՝ «ի բազում կերպս տրամաբաժանին»¹²:

Չափ ու կշռույթի վերաբերյալ իր ասելիքները շարադրելիս Գապասաքալյանը օգտագործել է XVII—XVIII դարերում հրատարակված մի քանի քերականական աշխատությունները¹³: Եվ հավատարմարար (անգամ համեցած բալոր հունարանություններով) վերաբազրելով դրանց համապատասխան մասերը, մանավանդ Հովհաննես Հոլովի աշխատության շորրորդ «Հատորի» բովանդակությունը (շնչին տարբերություններով ու փոքր հավելումներով)¹⁴, դատողությունների առանցք է դարձրել «տառ-վանկ-ոտք-տաղ» (ստիքոս) աստիճանավորությունը:

Գապասաքալյանը որոշակի գաղափար է ունեցել նաև գուտ երաժշտական (դրական խոսքերից անկախ կշռույթաձևերի մասին, ձևեր՝ որոնք հայոց մասնագիտացված երգարվեստում կիրառվել են նույնիսկ V դարում, ու հետզհետեւ զարգանալով, տեսության մեջ ևս ուրույն մեկնաբանություն ստացել X—XV հարյուրամյակներում: Բայց դրանց շուրջ հեղինակը «Համառոտութեան» էջերում շի տարածվում: Այլ բավարարվում է հատուկ նշում կատարելով այն մասին, որ դրական միևնույն խոսքը երաժշտա-շափական տարբեր մեկնաբանություններ, ու շափական միևնույն սքեման էլ՝ ներքին կշռույթային տարբեր ձևավորումներ կարող են ստանալ (տե՛ս 142 և 143 հարցերը): Չափ ու կշռույթի խնդիրներին վերաբերող իր դատողություններում Գապասաքալյանը որպես ելակետ է ընդունում տաղաշափական ոտքի տեսակները (իրենց բազկացուցիչներով) ու դրանց համապատասխանող «ձայնադրական եղանակները» (Հրց. 124), որոնք արտաբերվում են ամանակով, և մի քանի անգամ ընդգծում՝ «որ յայտ է, թէ ամանակն է գաղտնի գիտութեամբ» (Հրց. 116):

«Համառոտութեան» մեջ խաղերի մասին առկա նյութի մեծ մասը վերաբերում է հեղինակի առաջարկած ձայնագրության նոր համակարգին, որը նա ձգտում է ստեղծել հայկական, բյուզանդական և արևելյան երաժշտության տարբերի համապրումով: Բուն խնդիրը՝ խազանշաններին բարձրության ու ձայնամիջոցային ճշգրիտ արժեքները հատկացնելու միտումն է, որ թեև այն-

12 Դեռևս վաղ միջնադարում հայկական ձայնեղանակներից յուրաքանչյուրի նշումը հայկապես տարածվել է ոչ միայն ամյալ ձայնեղանակի ոլորտին պատկանող մեղեղիական տարբեր տիպերի (կամ կաղապարների), այլև համապատասխան «դարձվածք» եղանակների վրա: Զարգացած ավատատիրության շրջանում աննախընթաց կերպով բազմանում են հայոց ութ-ձայնի համակարգով ենթադրվող տիպական եղանակները, որ և գիտակցում հն ժամանակի մտածողները (օրինակ՝ Առ. Սյունեցին): Այնպիս որ, խոր միջնադարից մինչև մեր օրերը հասնող փաստերի, առույթների ու տեսական դրույթների մի շարք ենք ստանում, որ գալիս է ապացուցելու, թե հայկական ութ-ձայնը ևս, իրականում, ներկայացրել է բազմաձայն, հարուստ մի համակարգ:

13 Այդ թվում՝ Անկան վարդապետի «Թերականութեան գիրքը» (Ամստերդամ, 1666), Խաչատուր Էղքումեցու «Դիրք քերականութեանը» (Ալիկոռնա, 1696), Սիմեոն Զալպայեցու «Դիրք որ կոչի քերականութիւնը» (Կ. Պոլիս, 1725), Կղեմես Գալանոսի երկասիրությունը (Clemente Galano. Grammaticae et Logicae Institutiones Linguae Literalis Armenicae, Romae, 1645) և հատկապես Հովհաննես վրդ. Հոլովի քերականությունը («Ձտութիւն հայկարանութեան կամ քերականութիւն Հայկական», Հռոմ, 1674):

14 Հմմտ.՝ «Յաղագս շափարանութեան տառից» (էջ 192), «Յաղագս վանկաշափութեան» (էջ 193), «Յաղագս սահմանի և բաժանման ոտից» (էջ 195) և «Յաղագս սահմանի և բաժանման տաղի» (էջ 197):

պես էլ դուրս չի գալիս փորձի շրջանակներից, սակայն ունի պատմա-մշակութային որոշակի նշանակություն¹⁵:

Ավելի կարևոր են հեղինակի հատուկնությունները, որոնք փաստորեն պատկանում են խաղաղության հին արվեստին: Ասենք՝ խաղանշանների «սրածե», «թրածե», «ճղածե», «օղածե», «կտցածե» ու «զրածե» լինելու մասին դիտողությունը (Հրց. 148). դրանց (խաղերի) «յաղագս պերճագարդութեան եղանակի» հորինված լինելու վերաբերյալ ասույթը¹⁶. իսկ զուտ ելեչի հարթության վրա՝ խաղերի պաշտոնը տվյալ եղանակը «ի շեշտածայն, ի բթածայն, ի պարոյկածայնն [և] ի յոլորակածայնն» «տրամարաշխելու» մեջ տեսնելու միտումը (Հրց. 151) և այլն:

Տեսական այս հարցերի քննության մակարդակը պայմանավորված է հայկական երաժշտագիտության ուշ միջնադարյան ընդհանուր վիճակով, նրան հատուկ դանդաղ զարթոնքի հակումով ու նաև սրոլաստիկ մտածողության ուշացած որոշ դրսենորումներով, որոնք Գալասարալյանի զրչի տակ ստանում են ինքնատիպ շեշտեր: Եվ սակայն, աշխատության վերոհիշյալ հատվածներից յուրաքանչյուրում հեղինակը առաջադրում է նաև շահեկան մտքեր, և որ կարենը է, ողջ շարադրությունը հանգեցնում է կշռույթային առումով միևնույն հայտարարի տակ բերվելու ընդունակ ոտանավորները որպես շափանմուշ (էտալոն) վերցված մեկ ձայնեղանակի զուգորդությամբ երգելու փորձի հաստատմանը: Ուշադիր ընթերցողը հրատարակվող աշխատության մեջ կգտնի մտքեր և այն մասին, որ տաղաշափական միևնույն ձևով հորինված ոտանավորները հնարավոր է երգել տարբեր ձայնեղանակներում, և այն մասին, որ միևնույն ձայնեղանակի հիմա վրա, դիմելով տարբեր կշռույթածերի, կարելի է մարմնավորել մեղեղիական տարբեր կերպարներ: Հիմնական շեշտը, սակայն, դրված է տաղաշափական նույն ձևով հորինված և կշռույթային առումով միևնույն հայտարարի տակ դրվելու ընդունակ ոտանավորները մեկ ձայնեղանակի օգնությամբ հնչեցնելու հնարավորության վրա, որը հայկական ուշ միջնադարի պայմաններում իրացվել է միակողմանիորեն և շափականցորեն:

Հրատարակվող բնագիրը տպագրության պատրաստելիս կանոնավորել ենք ուղղագրությունը և կետադրությունը, բացել ենք հապավումները, փակագծերի մեջ առել Աստվածաշնչից արված վկայակոչումների տեղիները, շտկել ընդօրինակող զրչի թույլ տված ակնհայտ վրիսակներն ու մասնագիտական աղճատումները, և դրվածքն օժտել անհրաժեշտ ծանոթագրություններով:

¹⁵ Գալասարալյանի այդ միտումը ցույց է տալիս, որ խաղանշանները հնում չեն ունեցել ելեչի ճշգրտված քայլեր արտահայտելու զորությունը: Նրա շանքերը հստակ մատնանշում են խաղաղության հին արվեստի ապրած սուր ճպնաժամը, մինչդեռ, նույն ժամանակաշրջանում կամ ամենի վաղ ոչ մի տեղ չենք հանդիպում «խաղերի բանալիի» կորառյան մասին արտանշների: Տեղին է այստեղ նշել, որ Գալասարալյանը խաղանշանների մասին իր գրվածքներով փաստորեն հիմքն է դրել արդի հայ խաղագիտության, ինչպես նշել ենք նաև որիշ առիթով («Քննական տեսություն հայոց հին ու միջնադարյան երաժշտության պատմության», ԳԱ «Էրարեց», 1971, № 9, էջ 40):

¹⁶ Որը պետք է հասկանալ՝ մեղեղիական զարդարանքների համար (դրանք ուրվագծելու կամ նշելու նորատակով) հորինված լինելու իմաստով:

Եջ 96ա ՀԱՄԱՌՈՏՈՒԹԻՒՆ երաժշտականի գիտութեան ՀԱՐՑ եք
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԵԱՆՑ ՇԱՐԱԴՐԵՑԵԱԼ ՅՈՒՄԵՄՆԵ ԲԱՆԱՍԻՐԻ
Ի ՓԱՌՍ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՅՈԳՈՒՏ ԱԶԳԻՍ ԱՐԱՄԵԱՆՍ
Ազգաւարութիւն ինչ առ բարեսէր վերծանողս. օգնեա Սուրբ Հոգի:

Երաժշտականութեան ներհմտութիւն ըղձալի իմն գիտութիւն գու-
լով ի մէջ ընդհանուր գիտութեանցն ծանօթութեանց, զանազանիւր
պանծայ մականունութեամբք՝ որ յաղագս փառաբանելոյն զատուած,
երբեմն կոչի երգ աստուածային, երբեմն երգ եղանակաց և ցնծութեան,
և երբեմն յորջորջի երգ հրեշտակաց և հրեղինաց. Յիրաւի, է երգ հրե-
ղինականն զօրութեանց, որպէս լուաւ կայծակնամաքուրն եսայիաս
զեռահիւսեակ սրբասացութեան զձայն, որք նուազէին ի դէմ ամենա-
սուրբ երրորդութեան անբաժանելութեան՝ սո՞ւրբ, սո՞ւրբ, սո՞ւրբ տէր
զօրութեանց (Եսայ. 2, 3): Արդ՝ որպէս տեսանի նշոյլն նոյնոյ յայտ-
նապէս ըսքանչելարուեստ վայելլածայնն բանականացն ասեմ, և ի ձայ-
նէ ոչ բանականացն, որ ըստ յարմարագոյնն արհեստի: Եւ քանզի թարց
96բ գիտութեանց որոյու ոք կարէ գոլ զերահնչակ երգեցող և բանիրուն երա-
ժիշտ, և ըստ արհեստի մակացութեան յօրինող երգոց: Նաև առանց սոյն
հմտալի գիտութեան ոչ իւիք երբեք կարեն լինել հոչակահամբաւ բա-
նաստեղծ և ներհուն հմուտ ի գիտութեանս խաղասացողութեան, զորոց
ցանկալի տեղեկութեանցն բարեձայնութեանց հանապազ քաղցրածայ-
նեալ բարեբանի բարձրեալն աստուած, որպէս տան փառս վեցթևեան
սրորէքն սոյն երաժշտականն երգաբանութեամբ, ըստ սրբոյ աստուա-
ծաբանն աւետարանչի Յոհաննու (Յայտ. 6, 13): Եւ մեք ընդ նոսին
երգակցեալ փառաւորեսցուր զտուողն աստուած բարութեանց, որում
վայել է պատիւ և փառս մատուցանել, հանդերձ երաժշտական եղա-
նակաւ, յաւիտեանս յաւիտենից անխափան:

Յաղագս Երաժշտական գիտուրնան թէ զինչ է

[1] Հրց.— Զին՞շ է երաժշտութիւն:

Պտ.— Է գիտութիւն, որ ուսուցանէ զկերպն եղանակաւ երգելոյ:

[2] Հրց.— Քանի՞ք են մասունք երաժշտութեան:

Պտ.— Երեք, որպէս նուազական, եղանակական, և սրնզական²:

97ա [3]||Հրց.— Ի քանի՞ս բաժանի նուազականն:

Պտ.— Յերիս, որպէս ի ձայնն, ի փշումն և ի բաղխումն:

[4] Հրց.— Զին՞շ է բաժանումն ի ձայն:

Պտ.— Է այն, զոր միշտ երգեմք ձայնիւ հնչմանց, որպիսի է տաղն,
մեղեղին և շարականն:

[5] Հրց.— Զին՞շ է բաժանումն ի փշումն:

Պտ.— Է այն, որ փշեն զեղէզնափողն, զսրինդն և զայլ երաժշտա-
կան գործիսն:

[6] Հրց.— Զին՞շ է բաժանումն ի բաղխումն:

Պտ.— Է այն, որ զաղմոսաբանն, զքնարն, զծնծզայն և զայլն
հարկանեն ձեռօր և քաղցրանուագ ձայն արձակել տան:

[7] Հրց.— Զին՞շ յարմարութիւն ունին այս երիսս բաժանմանց:

Պտ.— Զի որպէս ասի, թէ բաղխումն պատկանի կարողութեան հօր

աստուծոյ, ձայնն իմաստութեան որդւոյն, և փշումն կենդանական բարութեան հոգւոյն աստուծոյ:

[8] Հրց.— Այս երից բաժանմանց նուազերգութեանց որո՞վ փառաբանի ձայնիւ արարիչն բնութեանց:

Պտ.— Հանապազ փառաբանի ձայնիւ հնչմանց, որպէս ետես մարդարէն եսայի, և վկայէ Դիոնէսիոս Արքապատացին, որ Յաղագս աստուածայնոյ քահանայապետութեան կարգի:

97բ [9] Հրց.— Եղեգնափողիւ և սրնդաւն միթէ ոչ փառաբանի փառաւորեալն:

Պտ.— Այս, փառաբանի, որպէս վկայէ աստուածաբան աւետարանիշն Յոհաննէս, որ ի յերկնից լուաւ զհարկանողս քնարաց (Յայտ. Ե, 8):

[10] Հրց.— Ուրեմն սաղմոսարանաւ, քնարիւ և այլ գործեօք ևս բարեբանի բարձրեալն:

Պտ.— Քստ բարոյն ասեալ՝ ընդ համայն գործեօքն երգոց երգածայնեալ բարեբանի. բայց ըստ շար կողմն կոյս՝ ոչ, որպէս պատուիրէ հոգին աստուծոյ ի ձեռն Ամովսայ մարդարէին:

[11] Հրց.— Արդեօք ունի՞ս վկայութիւն ի սուրբ գրոցն, թէ է այնպէս:

Պտ.— Այս, որպէս ասի (I Մնաց. ԺԵ, ԺԶ), թէ ի նմին ժամանակի նորոգեցաւ յերգս օրհնութեան ի փող և ի քնար և ի սրինդ, և օրհնէին զաստուած յերկինս, և յաջողեաց նոցա:

[12] Հրց.— Ի քանի՞ս առնանի ի կերպս երաժշտութիւն:

Պտ.— Յերիս, որպէս անհամեստ, համեստ և բարի³:

[13] Հրց.— Զի՞նը է անհամեստն:

Պտ.— է շար և շարժիշտուիկան իրաց, զսմանէ ասաց աստուած՝ ի բաց արա յինէն զձայնս երգոց քոց՝ և ըզ նուազս սրնդաց քոց ևս ոչ լուայց (Ամովս. Ե, 23):

[14] Հրց.— Զի՞նը է համեստն:

Պտ.— է հասարակօրէն ասացեալն երգ, որ ի գով և ի պարսաւն յօրինեալ՝ թարց առասպելեաց:

[15] Հրց.— Զի՞նը է բարին:

Պտ.— է աստուածայինն երգ, և միշտ ցանկալի, որով հանապազ զեռահիւսեակ սրբասացութեան նուազն մատուցանեն վեցթեան սրորէքն ամենասուրբ երրորդութեան՝ անբաժանելութեան հօր և որդւոյն և սրբոյն հոգւոյն:

Յաղագս գովորեան երաժշտութեան

[16] Հրց.— Գովելի՞ է երաժշտութիւն, թէ ոչ:

Պտ.— Այս, գովելի է. որպէս երեք մանկունքն ի հնոցի հրոյն Բարիլոնի օրհնէին և գովեին զաստուած երաժշտական եղանակաւ և ձայնիւ հնչմնաց, ասելով. Օրհնեալ ևս տէր աստուած հարցն մերոց և այլն (Դան. Գ, 51—52):

[17] Հրց.— Այլ ինչ ազդուութիւն ունի՞ երաժշտութիւնն, թէ ոչ:

Պտ.— Այս, յոյժ ազդու է երաժշտական նուազն, զի նովաւ դեք ընկըրկին. ուստի յայսն Սաւուղայ հալածիւր տասնադեայ քնարաւն Դաւթի (I Թագ. ԺԶ, 23):

98ր [18] Հրց.— Ուրեմն պարտիմք յամենայն ժամ գովարանական ձայնիւ
|| երգոց բարեբանել զաստուած:

Պտ.— Այո, պարտիմք հանապազ բարեբանել զաստուած ընդ ամենայն սրբովք, երաժշտական եղանակաւ և երգօք հոգևորօք,
զի է մեզ օրէն յափտենական, որպէս ասի (Յունց. Ժ, 8):

Յաղագս թէ ուստի զաւ երաժշտութիւնն:

[19] Հրց.— Ո՞վ եղիտ զերաժշտութեան երգ:

Պտ.— Որդին Դամէքայ Յօրալն, որ էր հոգիւ խաշանց, եղիտ զերգս
և զքնարս (Սննդ. Դ, 21):

[20] Հրց.— Յորո՞ւմ ժամանակի նորոգեցաւ երաժշտութիւնն:

Պտ.— Ի հնումն ժամանակի, որպէս ասի (I Մնացորդաց Բ, զլուս և
54 համարն) [և] որպէս ի վերն ասացաւ:

[21] Հրց.— Ի ժամանակի թագաւորութեան յումմէ՞ հնարեցաւ երգըն
բարեբանութեան:

Պտ.— Նախապէս ի Դաւիթ աստուածաշայր անուանեցեալ մարգա-
րէն, որ ներկեալ շնորհօք հոգւոյն սրբոյ առերգել զերգս
հոգեոր նուագարանաց:

[22] Հրց.— Յօրինեա՞ց մարգարէն զգործի օրհնութեան:

Պտ.— Այո, որպէս ինքն վկայելով հաստատէ, թէ ձեռք իմ արարին
զսաղմոսարան, և մատունք իմ կազմեցին զգործի օրհնու-
թեան:

[23] Հրց.— Զի՞նչ էր զգործի օրհնութեան:

99ա Պտ.— Էր նախապէս եօթնազեայ քնարն, որըստ եօթնար-
փեան շնորհացն հոգւոյն, որով յաւուրս եօթ անգամ երդա-
ձայնեալ օրհնէր զաստուած, ըստ այնմ թէ՝ եօթն անգամ
յաւուր օրհնեցից զքեզ (տէր) [Սաղմ. Ճժի, 164].

[24] Հրց.— Ասկա զի՞նչ է տասնազեայ քնարն:

Պտ.— Տասնազեայ քնարն յիտոյ յարմարեաց ըստ տասն պատուի-
րանացն աստուծոյ, որով միշտ զհոգին սուրբ հնշեցուցանէր.
զի ի ձեռն հոգւոյն սրբոյ կոշեցաւ սաղմոսարան, որ է զա-
նուն:

[25] Հրց.— Գո՞յր այլևս երգող ի Դաւիթայ:

Պտ.— Այո, զոյր, որպէս ասի (I Մնաց. ԺԵ, 19) թէ՝ Աման, Ասափ
և Եթան էին զլուս երգչացն և երգէին տաւզօք պղնձեօք:

[26] Հրց.— Այլևս գո՞յր ի նմին ժամանակի:

Պտ.— Այո, որպէս ի նոյնն (ԺԵ, 20) թէ՝ Զաքարիաս, Ոզիէլ, Սեմի-
րամօթ, Եղիէլ, Անանիաս, Եղիար, Մասիհաս՝ քնարօք նուա-
գէին:

[27] Հրց.— Գոյի՞ն այլևս, թէ ոչ:

Պտ.— Այո, [որպէս] զարձեալ ի նոյնն [ԺԵ, 21], թէ Մատթիաս,
Եղիփաղէաս, Մակեղիաս, Աբեղզօմ, էէլ, Ոզիաս՝ սրնզօք
նուագէին:

[28] Հրց.— Գոյի՞յր այլ ևս զաօղ արհեստիս գիտութիւն:

99բ Պտ.— Այո, որպիսի է զերահոշակ բանաստեղծն Հոմերոս, որ
գտաւ զքերթողութեան արհեստ զօրութեամբ երաժշտութեան:

[29] Հրց.— Դեռևս կա՞ն գտանողք:

Պտ.— Այո, կան, որպիսի է քաջն Որփէոս՝ բանաստեղծն Յրակիոյ և հոչակահամբաւ նուազածու, որ ընդարմացուցեալ նուաճէր զգազանս ամեհիս քաղցրաձայն նուազերգութեամբն:

Յաղագս թէ վասն էր ուր են ձայնքն

[30] Հրց.— Է՞ր վասն ութն են ձայնքն մեր:

Պտ.— Ութն են ըստ ութից ձայնաւոր գրոցն, և ըստ ութն կանոնացն Դաւթի, նաև ութ ձայնական գործեացն:

[31] Հրց.— Եօթ են ձայնաւորքս, [իսկ] դու ասես ութն:

Պտ.— Ու. այլ է ութն ըստ ութիցն եղանակաց, որպէս ասէ Դաւիթ Անյաղթն:

[32] Հրց.— Ո՞րք են ձայնական գործիքն:

Պտ.— Են սոքա. խոշափողն (1), մակալեղուն (2), լեզուն (3), բերանն (4), ատամունքն (5), շրթունքն (6), և օղն (7), որ ի մարդն (8):

[33] Հրց.— Ի՞նչ զօրութիւն ունին սոքա յեղանակս:

Պտ.— Ունին զօրութիւնս բազումս. է և համանգամայն գործի եղանակաց, որ ընդ ձայնաւոր գրոցն:

[34] Հրց.— Ո՞յք են ձայնաւորքն:

100ա Պտ.— Են այսոքիկ. ա՛. ե՛. է՛. լ՛. ի՛. ո՛. ո՛ւ. և օ՛:

[35] Հրց.— Զի՞նչ է զօրութիւն սոցին գիտութեանս:

Պտ.— Են հիմն և իրք թէ գործի համայնիցն երգոց և ընդհանուր եղանակաց:

[36] Հրց.— Ո՞րպէս լինիլ կարեն հիմն և գործի:

Պտ.— Այնպէս, որ թարց սոցա ամեննեին ձայնաւոր եղանակքն ոչ կարեն երգիլ:

[37] Հրց.— Ուրեմն ութից ձայնաւոր գրոցն զգիտութեանց պա՞րտ է իմաստասիրել:

Պտ.— Այո, վասն զի ամենայն երգք և եղանակք սոքօք բացակատարէ զիւրոցն զձայնս, և ունին փակեալ յիւրեանս դադտնի գիտութիւն երաժշտական:

[38] Հրց.— Քանի՞ք են հիմունք ձայնից:

Պտ.— Չորս, որպէս ած., բծ., դծ., դծ.:

[39] Հրց.— Քանի՞ք են կողմունք ձայնից:

Պտ.— Չորս, որպէս ակ., բկ., դկ., դկ.:

[40] Հրց.— Գո՞ն այլես ձայն, թէ ոչ:

Պտ.— Այո, գոն այլես երկու ստեղի, որ բկ-ին և դկ-ին, բայց բաժանումն բազում:

[41] Հրց.— Յորո՞ց գտան շորս բուն ձայնքն:

Պտ.— Ած., ի ձեռն Սիներգէսի երաժշտի, ի հիւսնականէ գտաւ յարշեստէ:

100բ [42] Հրց.— Երկրո՞րդ ձայնն՝ բծ.:

Պտ.— Բծ.՝ յեղօրէն իւրմէ Փոկեղեղէսի երաժշտի, որ ի ձայնէն դարբնականէ:

[43] Հրց.— Երրո՞րդ ձայնն՝ դծ.:

- Պտ.— Յեղօրէն սոցա՝ Սովեկղիդէսի երաժշտի, որ ի հոսանացն զետոց:
- [44] Հրց.— Զորրո՞րդ ձայնն՝ դձ.:
- Պտ.— Դձ.՝ ի քեռորդոյն սոցայ՝ ի Փիսիանոսէ, որ ի ձայնէ յաղութեացն:
- [45] Հրց.— Ո՞յք էին բաժանողք զկողմունս:
- Պտ.— Քինոսփենէս երաժիշտն, զկողմն ած. ին, որ [է] ակ., Աքիլես՝ զկողմն բծ.ին, որ է բկ., և դծ.ին, որ է զկ., Ենիմէնս՝ զկողմն դծ.ին, որ է դկ.:
- [46] Հրց.— Զերկու ըստեղիսն ո՞յք էին արարողք:
- Պտ.— Թէսփիլեանք երաժիշտքն, որպէս վկայէ սուրբն Գրիգոր ի Գիրս Հարցմանց*:

Յաղագս նին ձայնիցն

- [47] Հրց.— Զի՞նչ են հին ձայնքն:
- Պտ.— Են այնք, որք լեալ իսկ են իրք ենթակայ նոր ձայնիցն:
- [48] Հրց.— Ո՞յք էին գտօղք զհին ձայնս:
- 101ա Պտ.— Սիներգէս երաժիշտն՝ մի հիւնակս ի մի փայտէ հնշմանն գտաւ զլիդիոսն⁴, որ է ած.:
- [49] Հրց.— Երկրորդն ո՞վ եղիտ:
- Պտ.— Եղրայր սորա՝ Փոկեղեղէս, ի գարբնականէ և յերկաթոյ կոհլոց [եղիտ] զղեւտերոսն, որ է բծ.
- [50] Հրց.— Երրո՞րդն:
- Պտ.— Եղրայր սոցայ՝ Սովեկղիդէս, օրինակեալ ի զետոց խաղացմանց և յործանացն հոսմանց, եղիտ զերաժշտականն արոփոսն, որ է դձ.:
- [51] Հրց.— Զորրո՞րդն:
- Պտ.— Քեռորդին սոցայ՝ Փիսիանոս, գոլով քաջահմուտ երաժիշտ, ի յաղօրեացն դարձմանէ ի ձայնից եղիտ զտետարոսն, որ է դձ.:
- [52] Հրց.— Ո՞վ երեր զսոսա ի կարգն:
- Պտ.— Արքեղայոս երաժիշտն, որ գտաւ որոշաբար և եղ ի շարն և ի կարգ այսու ձայնից, որպէս ասեն սուրբն Գրիգոր և Դաւիթ Անյաղթն:
- [53] Հրց.— Ո՞վ էր բաժանոշն ձայնից:
- Պտ.— Մտեփաննոս փիլիսոփայն՝ գոլով զերավսեմ երաժիշտ, որ բաժանեաց զձայնս զոյից ի մասունս իդ, որք են՝ բառաշե՛լ, զոշե՛լ, բշե՛լ և այլն:
- [54] Հրց.— Գո՞ն այլ ևս, թէ ոշ:

* Նպատակահարմար է այստեղ ևեթ նշել, որ սույն և հաջորդ զլուխների բավանդակությունը Գալգասաքալլյանք իրոք քաղել է իր մատնանշած ազրյուրից: Հմմա. Գր. Տարեացի, Գիրը Հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 639—640: Թերեւ ազելորդ շէ հիշել նաև, որ քննարկվող Հարցերը, զարգացած ավտատաթրության շրջանում, տակավին Տաթևացուց էլ առաջ ընդհանուր առմամբ շոշափել է Վարդան Արենելցին (տե՛ս նրա՝ Լուծմունք ի ս. Գրոց, Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 750, էջ 113ա—115ա, և կամ՝ № 2544, էջ 161ա—164ա):

101ր Ո՞ւ.—Այս, զո՞ն, որպիսի է Սարդիանոս թեզրացի, Զեղէոս երածիշտքն, և երդիշքն Սիներգէս, Փոկեղեղէս, Պիտանաս և այլն, զորս տեսցես ի Մեծի երաժշտութեան և ի Գիրս հարցմանց:

Յաղագս հաղորդակցութեան ձայնիցն

[55] Հրց.—Զի՞նչ է հազորդակցութիւն ձայնիցն:

Պտ.—է այն, որ ի ժամանակի երգեցմանն, որպէս փոխ առեալ երեխն ի միմեանց զձայնս:

[56] Հրց.—Ռո՞րպէս առնուն փոխ լիրերաց:

Պտ.—Այսպէս. աձ—դկ., բձ—դկ., զձ—բկ., ղձ—ակ:
Կողմն առաջնոյն՝ տայ շորրորդին՝ մասնապէս,
Եւ երկրորդին՝ ընդ երրորդին՝ լրապէս,
Եւ երրորդին՝ ընդ երկրորդին՝ փոխապէս,
Չորսն առաջնոյն՝ տալով լինի՝ իբր հանդէս:

Յաղագս անուանց ուր ձայնից

[57] Հրց.—Զի՞նչ են անուանք ութից ձայնից:

Պտ.—Չորս բուն ձայնից անուանքն են սոքա. առաջին ձայն, երկրորդ ձայն, երրորդ ձայն և շորրորդ ձայն:

[58] Հրց.—Ռո՞րպիսի կերպիւ են նշանագիծք սոցա:

Պտ.—Են այսու կերպիւ. աձ., բձ., զձ., ղձ.:

[59] Հրց.—Զի՞նչ են անուանք շորից կողմանցն:

102ա Պտ.—Են սոքա. առաջին կողմ, երկրորդ կողմ, որ և ասի աւագ կողմ, ||երրորդ կողմ, որ և ասի վառ, շորրորդ կողմ, որ և ասի վերջ ձայն:

[60] Հրց.—Ռո՞րպէս են նշանագիծք սոցա:

Պտ.—Են այսպէս. ակ., բկ., զկ., ղկ.:

[61] Հրց.—Գո՞ն ստորաբաժանումն սոցա, թէ ոչ:

Պտ.—Այս, զո՞ն, զի որպէս ձայնն ութ է, բայց ի յոդունս տարալուծանի ի ձայնս:

Յաղագս բաժանման ձայնից

[62] Հրց.—Ի քանի՞ս տրամաբաժանին ձայնքն:

Պտ.—Ի բազում կերպս:

[63] Հրց.—Ռո՞րպէս ի բազում կերպս տրամաբաժանին, ութն զոլով:

Պտ.—Ռոպէս տրամաբաժանին շորս հողսոնքն, և վերափշեն այլ և այլ հողմունք ի նոցանէն, նոյնպէս ձայնքն այլ և այլ ունին բաժանմունք:

[64] Հրց.—Ռո՞րպիսի կերպիւ են բաժանմունքն:

Պտ.—Են այսու կերպիւ. աձ, բձ, զձ, ղձ և այլն, տես ի Մեծի երաժշտականոթեան⁵:

[65] Հրց.— Գիտե՞ս սոցա մեկնողական անուանքն:

Պտ.— Այո, գիտեմ. առաջինն յիւր ձայնէն ի վեր ասի յիւտէյնի⁶. երկրորդն շորս ձայն ի վեր ասի թիզ սէկեահ. երրորդն մի [ձայն ի վեր] ասի նևա, շորրորդն երեք [ձայն ի վեր], որ և ասի կերպանիէ: Սոցա այլ և այլ կերպն ևս լինի:

102ր [66] ||Հրց.— Ռւրեմն ելանե՞ն ի նոցանէ բազում կերպիւ ձայնք, ըստ եղանակի ձայնադրութեան:

Պտ.— Այո, որպէս ելանի յունաց և յալլազգեաց բուն ձայնիցն բազում կերպիւ ձայնք և եղանակք, նոյնպէս և ի սոցանէն:

Յաղագս հեղման ձայնից

[67] Հրց.— Զի՞նչ է հեղումն ձայնից:

Պտ.— է այն, որ ի ձեռն նորին՝ վերելութիւն և ստորիջելութիւն շափի ձայնից, իրր քանակու:

[68] Հրց.— Ո՞րպիսի կերպիւ շափին ձայնք:

Պտ.— Ըսկիզբն առնու ի մի ձայնէն, և յառաջ երթայ ի բաղդատեցեալն, կամ ի կարգի եղեալն ի ձայն:

[69] Հրց.— Ո՞րպիսի եղանակաւ հեղին ձայնքն:

Պտ.— Ըստ այսմ եղանակի, աձ, թլ, ակ, զկ, գձ, աձ, թձ, զձ, զկ,
զկ, թկ, ակ, զձ, աձ, թձ, զձ, ակ, զկ, թկ, թկ, աձ, թձ, զձ, զկ,
աձ, թկ, ակ, զկ, թկ, աձ, զձ, ակ, թկ, թկ, աձ, թձ:

[70] Հրց.— Ունի՞ն սղանակք ինչ հեղելոյ⁸:

Պտ.— Այո, ունին. որպիսի է տրամաբանականին:

[71] Հրց.— Ո՞յք են նոքա և ո՞րպիսի անուամբք:

Պտ.— Են սոքա և այսու անուամբք. օրհնեսցոյք, զովեսցոյք, բարձր
արասցոյք, ալէլոթա, լաւիտեան, զովեցէք, օրհնեցէք, ըզտէք.

[72] Հրց.— Զի՞նչ է դարձումն ձայնից:

Պտ.— է այլ իմն կերպ ձեւափոխիլն երգոց. որպէս կէս ձայնին⁹ արտելուզեալ վերադառնայ ելումն հաղագի, որոյ իսկ ասի նիմ փէրտէ¹⁰:

[73] Հրց.— Ունի՞ն ութն ձայնք զնոյնն:

Պտ.— Այո, ունին, և այլ աւելի, որպէս յալու է ի փէրտէլուն:

[74] Հրց.— Ո՞րպիսի ձեւակերպութեամբ են նոքա:

Պտ.— Են այլ և այլ ձեւակերպութեամբ. ձայնը այլայլեալ, ձերն ընկրկեալ:

[75] Հրց.— Ունի՞ն զօրութիւն ինչ երաժշտականութեանս գիտութեան:

Պտ.— Ունին զօրութիւնս բազումս, զի են որպէս թէ համ, և չէշնի արհեստիցս գիտութեան:

[76] Հրց.— Ո՞յք են նոքա:

Պտ.— Են նոքա եղեալ ի Մեծի երաժշտականութեան, զորս անդ լրապէս ուսցիս:

Յաղագս /թէ/ ուստի և յումմէ գտաւ զիրն հայոց

[77] Հրց.— Ուստի՞ զտաւ զիրն հայոց:

Պտ.— Թոռն նոյի յԱրփարսադայ և յորդին Սեմայ ի Սովեր լերինն, որ զկնի շրջեղեղին:

[78] Հրց.— Յառաջ քան զշրջեղեղն կա՞յր գիր:

Պտ.— Այո, կայր, որ արարեալ և սկսեալ էր յենովքայ, որպէս ասէ մեկնիշն, թէ զենովքայ ասի գիր արարեալ:

103բ [79] ||Հրց.— Արգեօք ի շրջեղեղին ո՞րպէս պահեցաւ:

Պտ.— Կանգնեաց ասէ երկուս սիւնս խէցի և պղնձի, գրեաց յերկու սինն և մարգարեացաւ անցանելն երկրի շրով և հրով վասն մեղացն. ի շրոյն՝ պղնձինն, և ի հրոյ՝ աղիւսինն մնա[սցի]:

[80] Հրց.— Ապա ասի, թէ մարգարէն Մովսէս արար գիր վասն իսրայէլացւոցն:

Պտ.— Այո, շնորհօքն աստուծոյ արար գիր նոցա ի վերա նոր լեզուին, և նովին զրովն ետ աստուծ զտախտակս քարեղէնս, զոր ընթեռնուլ կարէին:

[81] Հրց.— Ո՞վ եղիտ զգիրն յունաց:

Պտ.— Կիկրոփս, որ է կաղմոս. և այն սերմանեաց ըզդպրութիւն ի յոյնս:

[82] Հրց.— Ուրեմն ի նոյն ժամանակի զի՞րն է նարդեանս:

Պտ.— Ոչ, այլ յետոյ եղիտ սուրբն Մեսրոպ, յուսացեալ յազօթս, խնդրեաց յաստուծոյ:

[83] Հրց.— Ո՞ւմ աշակերտն էր սուրբն Մեսրոպ:

Պտ.— Մեծին ներսեսի, որ էր հայր սորոյն Սահակայ Պարթևի հայրապետին:

[84] Հրց.— Ո՞յք էին եղանակադիր շարականացն, տաղից և մեղեղեաց:

Պտ.— Սուրբն Սահակ և մեծն Մեսրոպ յոդնաշխատ հայրապետըն մեր:

||Յաղագս շափարանութեան տառից

[85] Հրց.— Զի՞նչ է տառաշափութիւն:

Պտ.— Է ճանաշումն նոցա, որ ի ձեռն քաջահայտ հնթաղատութեան:

- [86] Հրց.— Քանի՞ք են տառք հայկազնեալց:
- Պտ.— Երեսուն և վեց, որպէս յայտ է, այբն առաջին և քէն վերջին բայց՝ և, օ, ֆ են յետահնար:
- [87] Հրց.— Ի քանի՞ս անջատի գիրն մեր հայոց:
- Պտ.— Նախապէս յերկուս. ի ձայնաւոր և ի բաղաձայն:
- [88] Հրց.— Ո՞րք են ձայնաւորք և բաղաձայնքն:
- Պտ.— Են սոքա. ա՛, ե՛, է՛, ը՛, ի՛, ո՛, ո՛ւ, օ՛: Եւ զատ ի սոցանէն, են բաղաձայնք:
- [89] Հրց.— Ի քանի՞ս անջատին ձայնաւորք:
- Պտ.— Յերիս, որպէս յերկար, ի սուղ և յերկամանակ:
- [90] Հրց.— Քանի՞ք են երկարք:
- Պտ.— Երկու, որպէս է՛, օ՛, որք թարց հեղայ արտելանեն ի բերանոյ մարդոյն:
- [91] Հրց.— Քանի՞ք են սուղք:
- Պտ.— Երեք, ե՞ս, ո՞ս, օ՞ս, որք իբր հեղենայ գոլով արտահնշին, որպէս յայտ է:
- [92] Հրց.— Քանի՞ք են երկամանակք:
- Պտ.— Երեք. ա՛, ը՛, ի՛, որք երբեմն ձկտին և երբեմն ամփոփին, որպէս երկար և սուղ առնեն ամանակսն:
- 104r [93] ||Հրց.— Ի քանի՞ս տրամաբաժանին բաղաձայնք:
- Պտ.— Յերիս. որպէս ի կիսաձայն, յանձայն և ի կրկնակս:
- [94] Հրց.— Ո՞յք են կիսաձայնք և քանի՞:
- Պտ.— Են երկոտասանեքին սոքա. զ, ժ, իս, հ, ո, չ, շ, ու, վ, ը, ֆ:
- [95] Հրց.— Ո՞յք են անձայնքն և քանի՞:
- Պտ.— Են մետասանեքին սոքա բ, դ, դ, ն, մ, ն, պ, տ, փ, ք:
- [96] Հրց.— Ո՞րք կրկնակք և քանի՞:
- Պտ.— Են եօթնեքին սոքա. լ, ծ, ծ, ն, չ, ց:
- [97] Հրց.— Վասն է՞ր բաժանին յերիս տեսակս ձայնաւորքն, ընդ բաղաձայնիւք:
- Պտ.— Վասն այն, զի ընդհանուր եղանակք են երեք տեսակ, որպէս նուրբ, որ է բարակ, ստուարք, որ է հաստ, և միջակք, որ է երկոցունցն հաւասար. որպիսի է զիլն, բամբն և միջակն աղիցն և թէլից, որ առ նուազարանս:
- [98] Հրց.— Առ ին՞չ պիտոյութիւն ունի իմացումն գրոց:
- Պտ.— Են սկիզբն և նիւթ ընդհանուր գիտութեանցն և մանաւանդ արհեստիս:
- [99] Հրց.— Արհեստիս գիտութիւն միթէ զրո՞վ իմացուի:
- Պտ.— Այս, նախապէս զրով, երկրորդ վանկօք, ոտիւք և տաղից շափարերութեամբն. մանաւանդապէս զօրութեանցն զրոց պարտ է լեալ վերահասու:

- [100] Հրց.— Զի՞նչ է վանկն:

Պտ.— Է երկու, երիւք կամ այլ աւելի զրովք բաղկացեալ բառ իմն:

[101] Հրց.— Ո՞րպիսի ինչ է զօրութիւն նորա:

Պտ.— է շափող զոտս, որ ի ներտաղականին:

[102] Հրց.— Ի քանի՞ս տրամատին վանկքն:

Պտ.— Յերիս. որպէս յերկարն, ի սուղն և ի հասարակն:

[103] Հրց.— Երկարն քանի՞ս և որպիսի՞ կերպիւ լինին:

Պտ.— Երեք. որոց առաջինն ունի ի մի երկար ձայնաւորացն. երկրորդն՝ յերկծայնից, և երրորդն՝ զկնի ձայնաւորացն ունի կիսաձայնս, որք ըստ կարգի են սապէս. Պօ՛—դէ՛, մա՛ր—կո՛ս և այլն. օ՛, է՛. յ, յ, ա, ա, ր, ս:

[104] Հրց.— Այս վերոյ ասացեալքդ բնութեամբ էին երկար, թէ՞ դրութեամբ:

Պտ.— Բնութեամբ են երկար նոյն երեք կերպն:

[105] Հրց.— Դո՞ն դրութեամբ երկար, թէ ոչ:

Պտ.— Այս, գոն, որք ևս են ըստ երից:

[106] Հրց.— Ո՞յք են նորա և ո՞րպէս:

Պտ.— Որոց առաջինն, զկնի ձայնաւորացն երկարից, ունի կիսաձայն. երկրորդն՝ զկնի երկծայնիցն ունի մի կամ երկու կիսաձայն. երրորդն՝ յետ կիսաձայնեց ունի||կամ բաղաձայն, կամ կրկնակք որգոն. օ՛րս, տէ՛ր. ս, ր:

Այս, այս. յ, յ, ր, ս, ս: Ա՛րդ. դ: Ա՛ռ, ա՛ռշ. ո, ո, զ: Են այս երեքն կրկնակք:

[107] Հրց.— Ի քանի՞ս տրամաբաժանի սուղն:

Պտ.— Յերիս, որոյ առաջինն ունելով ի վախճանի մի ի սուղ ձայնաւորացն. երկրորդն՝ ի միջակաց. երրորդն՝ յետ ձայնաւորացն, անձայն, որգոն. կե՞, ցո՞ւ. սը, նը. մակ, յօդ, որք են յայտնի:

[108] Հրց.— Ի քանի՞ս տրամատի հասարակն:

Պտ.— Յերկուս՝ ի սուղ և յերկարն. զորս և զայլ մնացեալս տեսցես ի բուն տեղն:

[109] Հրց.— Առ ին՞չ հարկաւորութիւն ունի վանկաշափութիւն յարհեստու:

Պտ.— Է կարի իմն կարեոր և պիտանացու արհեսագէտ և քանիթուն երաժշտացն, որք ներհմտութեամբ զրոցն արտաշնչութեանց կարեն երգել զհանուր բզշափաբերականն զտաղերդութիւն:

Յաղագս պարզ և բարդ ոտիցն

[110] Հրց.— Զի՞նչ է պարզ ոտքն:

Պտ.— Է բաղկացումն զրոցն, որ ի նոցուն վանկից:

[111] Հրց.— Զի՞նչ է բարդ ոտքն:

Պտ.— Է կապակցումն բազում զրոցն, որ ի պարզ ոտից:

[112] Հրց.— Պարզ ոտից վանկն ո՞րպէս է և քանի՞:

106ա || Պտ.— Է երկար և աղօտ. երկարն՝ երկամանակ և աղօտն՝ եղամանակ:

[113] Հրց.— Զի՞նչ է երկամանակն:

Պտ.— է, որ ունի յինքեան առծածկեալ երկանգամ շընչասպառութիւն, զոր գիտեն ներհմտացեալքն:

[114] Հրց.— Զի՞նչ է եղամանակն:

Պտ.— է, որ ունի շնչավերջութիւն մու, զաղտնափակ գիտութեամբ զոր շնչոյ զօրութեան տան արտաքարշել ներհմաստքն յարհեստիս:

[115] Հրց.— Ո՞րպէս արտելանի զրոցն ձայն ի հմտացելոցն:

Պտ.— Իւրաքանչիւր զրոցն ձայն առ յինքեանս ունին փակեալ, բայց ձայնաւորացն այլ աւելի. զնոսա որոշելով արտաքարշէ վարժասէր երաժիշտն:

[116] Հրց.— Արդեօք ունի՞ն հնար կամ այլ ևս գլխաւորաքար զաղտնի գիտութիւն յեղանակի սոյն ոտիցն:

Պտ.— Ունին. վասն զի ընդհանուր ձայնը և եղանակք ելեկջութեամբ ձայնի կարեն լինիլ. նոյնն, միշտ է ընդ ամանակաւ, որ յայտ է, թէ ամանակն է զաղտնի գիտութեամբ:

[117] Հրց.— Գո՞ն ևս այլ հնարագիտութիւն ի վանկաշափութեան գիտութիւն, թէ ոչ:

Պտ.— Այո, զոն այլ ևս հնարս բազումս, բայց է ի Մեծի երաժշտականութեան:

106p

|| Յաղագս անուան և բաժանման ոտից

[118] Հրց.— Եախապէս զի՞նչ են ոտքն:

Պտ.— Են գիւտ կամ հնարումն քերթողաց, որով եղանակ ոտիցն իմանի ըստ անուանն:

[119] Հրց.— Ի քանի՞ս անջատին ոտքն:

Պտ.— Ի չորս. որպէս յերկավանկ, յեռավանկ, ի քառավանկ և ի հնգավանկ, որք ըստ չորիցն տարերց:

[120] Հրց.— Ի քանի՞ս տրամատի երկավանկն:

Պտ.— Ի չորս, որ ըստ չորիցն բուն ձայնից, որգոն. համբոյր, մեծասար, մեծավերջ և անգայտ:

[121] Հրց.— Ի քանի՞ս անջատի եռավանկն:

Պտ.— Ի յութն, որ ըստ ութիցն ձայնից, որք են. ստեղ, վերջատանջ, քողարորք, քողաղօտ, հաւեղ, աւարտեղ, ներզե, սոնք:

[122] Հրց.— Ի քանի՞ս անջատին քառավանկն:

Պտ.— Ի վեշտասան, որ ըստ վեշտասան հողմոցն, որք յաւելեալ իսկ են ի բուն չորս հողմոցն՝ երիս երիս, և են սոքա. երկհամբոյր, երկանգայտ, երկմեծասար և այլք:

[123] Հրց.— Ի քանի՞ս անջատի հնգավանկն:

Պտ.— Ի մի, ըստ նշանակութեան ընդհանուր ձայնիցն, որք ըստ եղանակին մի են, բայց կերպն-զանագանին. և է մեծավերջ քողարորք:

107m [124] || Հրց.— Զի՞նչ է ձայնադրական եղանակացն անուանք:

Պտ.— Են այսորիկք եղանակք, որպէս. երկամանակ, եռամանակ, քառամանակ, հնգամանակ, վեցամանակ, հօթամանակ և ութամանակ:

[125] Հրց.— Ո՞րպիսի կերպիւ եղանակ դնեն սոքա երգոցն:

Պտ.— Այսու կերպիւ. Ար-դով. Եր-զեմք. Պո-վե-լով. առաջինն երկու շնչահատումն առնէ. երկրորդն՝ չորս, երրորդն՝ հինգ, որք են դիրագոյն հնարադրտթեամբ:

[126] Հրց.— Զի՞նչ է հնարն սոցա բնական:

Պտ.— Են շափ և քանակ ընդհանրիցն եղանակաց, զի ամենայն երգը և եղանակը ի ձեռն սոքօք արտայօրինեալ վերերգին, և է՝ լի գաղտնափակ գիտութեամբ:

Յաղագս տաղի և շափաբերութեան

[127] Հրց.— Զի՞նչ է տաղն, և զի՞նչ շափն նորին:

Պտ.— Է բան, բաղկացեալ բացորշեալ սեոիւ, թուով և դասակարգութեամբ ոտից շարագուգեալ:

[128] Հրց.— Զի՞նչ է նիւթ տաղին:

Պտ.— Է տառն, վանկն, ոտքն և տողքն:

[129] Հրց.— Զի՞նչ է ոտքն:

Պտ.— Է մասունք տաղի, բաղկացեալ ի վանկից շափեցելոց:

[130] Հրց.— Զի՞նչ է տողն:

Պտ.— Է անդամք տաղի, բաղկացեալ յոտիցն շափեցելոց:

107p [131] || Հրց.— Տաղն ի քանի՞ս անջատի ի տեսակս:

Պտ.— Ի յութն տեսակս, որք են. վեցաշափ, հնգաշափ, անուշ¹¹, ասքլէփէական, ֆալէվլէական, սաֆիզական, անափէստական, եամպական և ոչ գոյ այլ աւելի:

[132] Հրց.— Ո՞րպիսի կերպիւ արտելանի ի սոցանէ իւրեանցն ազդուութիւն կամ գիտութիւն:

Պտ.— Որպէս կենդանիքդ զուղկորութեան զճանապարհ երբեմն մանր զնացիւք, երբեմն բայլիւք, երբեմն մեղմն ճեմելով, և երբեմն յոյժ արշաւելով զբնթացս աւարտեն զիւրեանց, այնպէս և սոքա:

[133] Հրց.— Առ ՞՞րպիսի ոտիւք բաղկացեալ են սոքա:

Պտ.— Ըստ կարգի որութեան սոյնպիսի, 6 ոտիւք, 5 ոտիւք, 3, 4, 5, 5, 4, 6, բայց են այլ և այլ եղանակադիր յօրինմամբ:

[134] Հրց.— Ո՞րպիսի կերպիւ լինին վանկն, ոտքն, և տողն սեոօրէն տոեալ:

Պտ.— Այսու կերպիւ. Այս է Եր-դար-բան, *

Մերոյս ձալ-նա-բան:

Սոցա առաջինքն են պարզ ոտք, և են համբոյր: Յետին երկուքն՝ ստեղք: Են երկու տող, յորոց վերակրկնութեանցն արտայօրինին տաղք, է և հնգոտնեայ ոտանաւոր:

[135] Հրց.— Ո՞րպէս յօրինին տաղք ի գիւրին եղանակի:

108ա || Պտ.— Զափմամբ գրոցն, որպէս զտաղականն շափեն զրան այլազգն, որ ի ձեռն վէղնին, այսու կերպիւ.

մէֆախւլոն, մէֆախւլոն, ֆախւլոն¹². սոցա վերջականքն երկու, և առաջինքն միագիր վարին, որպէս լայտ է: —

Յաղագս բաժանման տեսակացն տաղից

[136] Հրց.— Զի՞նչ է տեսակաց բաժանումն տաղից:

Պտ.— Են այնք, որք ընդ տեսակօք իւրեանց պարունակեն զերկու- տասանն ոտու:

[137] Հրց.— Ապա ո՞րսպիսի կերպիւ կարեն լինիլ այնովէս:

Պտ.— Զի ութն տրամարաշիսի ի նոյն շափս, որ ընդ քանակու- թեամբ երաժշտականին:

[138] Հրց.— Ուրեմն երաժշտականն շափ և քանա՞կ ո՞նի գիտութիւն:

Պտ.— Ս.յո, որպէս ասէ Ներդինացին, թէ երաժշտութիւն շափով և քանակիւ գոյանա գիտութիւն. և աստուածաշունչ գիրն, թէ թիւ երաժշտացն ի զուարթութեան և այլն (Սիրաք, ՚լթ, 8):

[139] Հրց.— Ապա ուրեմն ութից յեղանակաց այլ ո՞շ զոյ աւելի եղա- նակք:

Պտ.— Ոչ զոյ. որպէս ասէ Դաւիթ Անյաղթն*, թէ մակրառակն¹³ ութ եղանակ է, որ մինչև ցայս վայր էին եղանակք ձայնից, և այլ աւելի թէ զոն, են մասունք սոցայ:

108բ [140] || Հրց.— Զի՞նչ է վեցաշափ տեսակն տաղից:

Պտ.— Է այն, որ ունի զոտս վեց, որոյ հինգերորդն ստեղ և վեցե- րորդն համբոյր, որզոն.

Զօրք երկ-նաշ-լին զուարթ-նոց, դաշ-սըք հրեշ-տա՞-կա՞ց վեր-նոց:
Եւ ունին եղանակ ըստ ամունակացն:

[141] Հրց.— Զի՞նչ է հնգաշափն:

Պտ.— Է այն, որ ունի զոտս հինգ, որոյ առաջի շորս ոտքն են ստեղք, և յետին մինն է համբոյր, որզոն.

Այ-ոօր որ-դիք Սի-օ-նի՛, եր-դին ձալ-նիւ ցըն-ծա-լի՛:

[142] Հրց.— Սոքա այլ կերպիւ ևս կարե՞ն լինիլ, թէ ոչ:

Պտ.— Ս.յո, կարեն բազում կերպիւ լինիլ, բայց ի ձեռն բանիբուն երգեցողաց:

[143] Հրց.— Ո՞րքան արտելանի ի սոցանէ գիտութիւնս ձայնադրական:

Պտ.— Ելանի ձայնադրականս գիտութիւնս անբաւս, որպէս ասի, թէ նորանուագ երգոց վերջառումն ոչ զոյ, և ոչ լինի իսկ:

* Այստեղ էլ ողեաք է նշել հետեւյալը. տվյալ դեպքում Գապասաքալյանը օգտվում է ոչ թե ուղղակի Անհաղթից, այլ նրա «Սահմանքի» երաժշտատեսական հատվածի միջնադարյան մի մեկնությունից, որ տարբեր բաներ են (տե՛ս Դավիթ Անհաղը, Սահմանք իմաստափութեան, Երևան, 1960, էջ 126. և հմմտ. մեր «Ներդաշնակության հենքի մասին ուսմունքը Հայաստանում միջին դարերում» հոդվածը, «Բանքեր Մատենադարանի», 1967, № 8, էջ 100—105):

[144] Հրց.— Ո՞րպիսի են յետամնացելոցն տեսակաց զգիտութիւն:

Պտ.— Զորս տեսցես ի բուն տեղի երաժշտականութեան, ըստ երկուտասաններեան ոտիցն, զորս արտադատեալ իսկ են երկուտասաններեան ժամու տունչեան, և անտի կրկնաբարդելով վերաբերեալ են ի վերայ իդ ժամուցն¹⁴:

[145] Հրց.— Տառն, վանկն, ոտքն, և տողն ընդհանրապէս ևս ասեալ ի՞նչ ուսուցանեն երգչացն:

109ա || Պտ.— Ուսուցանեն և բացայալուն եղանակացն զթիւս, զհանգամանս, զշափս և զքանակս, զքաժանմունս, զվերինս, զներինս, զելեջութիւնս, զկողմնական յայտնածածուկ զգիտութիւնս և զայլս:

[146] Հրց.— Սոքա ի՞նչ ուսուցանեն յերաժշտականութեանս:

Պտ.— Զայն, որպէս ուսանիմք քերթողութեան զգիտութիւն, որով կարեմք ճշգրտօրէն խօսիլ և անսխալ շարազրել, նոյնպէս սորօր ևս իրր քաջահմուտ երգեցող, կարեմք բազում կերպիւ ձայնափոխ առնել զերզս երգոցն և ընդհանրից եղանակաց:

Յաղագս խազիցն թէ զինչ է

[147] Հրց.— Զի՞նչ է խազն երգեցողութեան:

Պտ.— Է զիծ իմն երաժշտական, որ ի ձեռն արհեստաւոր գործեաց յօրինմամբ ձեւացուցեալ յաղագս օրհներգականն երգոց:

[148] Հրց.— Ո՞րպիսի ձեսկերպութեամբ են յօրինեցեալ:

Պտ.— Են այլ և այլ ձեսկերպութեամբ, որպէս թէ սրածե, թրածե, ձղածե, օղածե, կտցածե, դրածե և այլն:

[149] Հրց.— Վասն է՞ր արտայօրինեալ են:

Պտ.— Յաղագս պերճազարդութեան եղանակի, և մանաւանդ վասն փառաբանութեան աստուծոյ, որ ի ձեռն յոզնահանճար միջնորդի:

109բ [150] || Հրց.— Ուստի՞ հնարեցեալք են:

Պտ.— Ի հնոյ երգչացն փիլիսոփայից, կամ լիմաստնոց, մանաւանդ ի սրբոց հարցն են պարզեցեալ և ի կարզն իրաց եղեալ:

[151] Հրց.— Այլ ինչ զօրութիւն գո՞ն ի սոսա:

Պտ.— Այո, զոն. զի որ ընդդիմարաժանեալ զներդաշնակաւոր քաղցրահնուագ եղանակն արամարաշխէ ի շեշտածայնն, ի թթածայնն, ի պարոյկածայնն, ի յոլորակածայնն և այլն:

[152] Հրց.— Ուրեմն յոյժ կարեոր է և ցանկալի խազիցն զգովելի զիտութիւն:

Պտ.— Այո, միշտ է կարեոր և պիտանացու հանրիցն երաժշտաց. մանաւանդ նրբահանճար բարեսիրացն՝ և ոչ երգտնմանիցն:

Յաղագս բացայալութեան խազից

[153] Հրց.— Զի՞նչ է բացայալութիւն խազիցն:

Պտ.— Է այն, որով բացայալու քանիօնութիւն նոցա:

[154] Հրց.—Քանի՞ք են ներհայոցս խազք, որով լինին եղանակք:

Պտ.—Իննետասն. տասն վերելեակ և բարձր ձայնիւ, ինն ըստորիշեալք և ստոր ձայնիւ¹⁵:

[155] Հրց.—Ունի՞ն մարմին և անմարմին:

Պտ.—Այո, դոն մարմին, անմարմին, և ոչ մարմին անմարմին:

110ա [156] ||Հրց.—Զի՞նչ է մարմին և անմարմին ասացեալն:

Պտ.—Մարմինն մարմնացուցանէ զասացուածս եղանակաց, և անմարմինն ոչ:

[157] Հրց.—Քանի՞ մարմին դոն, և քանի՞ անմարմին:

Պտ.—Իննետասն խազիցն ինն մարմին է, հինգն անմարմին, և մնացելոց ոմանս է զառկապող ելուզումըն շնչոյ և ապն:

Յաղագս անուանց խազիցն

[158] Հրց.—Զի՞նչ են անուանք խազիցն:

Պտ.—Են այնք, որով իւրաքանչիւրոցն անուանք յայտնի երկին:

[159] Հրց.—Գիտե՞ս զանուանս նոցա, ըստ զազափարացն:

Պտ.—Են ալուպէս.՝ երկար, սար, թար, ոլորակ, միերնախաղ, ծծունկ, ծծ ծնկներ, բիւնկորճ, պէկորճ, զարկ¹⁶:

[160] Հրց.—Գիտե՞ս կստորինսն անուանց խազից:

Պտ.—Նոքտ ևս են սոլնպէս. փուշ, երկփուշ, պարովի, իսունճ, սներքնախաղ, խոսրովալին, խում, զակորճ, բէլլէ:

[161] Հրց.—Ո՞րպիսի կերպիւ ձայն ունին սոքա:

Պտ.—Իւրաքանչիւրքն ըստ հազարի ելուզմանն շնչոյն, որ ըստ ձևոյն նկատմանց:

110բ [162] ||Հրց.—Զի՞նչ է մեծամեծ խազքն երաժշտական¹⁷:

Պտ.—Են որք եղեալ լինին յետ և յառաջ խազիցն, իբր ստորակէտ, միշակէտ և վերջակէտ վարելով:

[163] Հրց.—Ո՞րպիսի կերպիւ ձայն ունին:

Պտ.—Ունին յընդ փրեսն զաղտնափակ երաժշտական գիտութեան ձայն. բայց ներհիմաստնոցն են յայտնի կրկեցելոցն:

[164] Հրց.—Եթէ ոք կամիցի հմտանալ յերաժշտականութեան և լինիլ բանիրուն երաժիշտ, որ ըստ ծիսոյ զերազանց հմտութեան, որո՞վ կարէ գոլ այնպէս:

Պտ.—Պարտ է ի սոսա գոլ հմուտ համանդամայն, որպէս. ի տառաշափութեան, ի վանկաշափութեան, յոտիցն զիտութեան, ի տողիցն հմտութեան, ի տաղիցն բաժանման, որ ըստ իւրոցն փոկական շափարերութեան, մանաւանդ քերթողութեան ընդհանուր տեղեկութեան, ի խազիցն զօրութեան, ձայնիցն իմաստութեան, փէրտէլիցն ստոր և վեր և նիմ ձայնիցն արտահընչութեան, ի բուն ձայնի երիցն ցեղից քաջայալ ընդելականն իսկութեան, կշռորդական քանա-

կին վէզնի հանրականն մակացութեան և այլոցն (որպէս ի վերն), որովք զօրէ առնուլ զբաղցրանուագ երաժշտականն եղանակաց զհամն, իբր զդոյզն ի յոգունց:

[165] Հրց.— Սոցա տեսութիւն եղեալ է և յայտնի. բայց զշարն փէրտէիցն ո՞րպէս իմանամք:

Դ11ա Պատ.— Իմասցուք արտ կերպին. որ ընդ խաղիւքն ձայնից:

1.	Եէկեան [կամ] ¹⁸ մեղմ փէնճուկէան	~	· · · · .	≈
2.	Մեղմ լիւսէլնի կամ աշիրան	/	· · · .	/
3.	Մեղմ սէկեան. կամ արագ	~	· · · .	ր
4.	Թաստ. որ ի աեղի Աէկեանի՝ և է զլոյս փէրտէիցն,			
	որ ըստ երգչաց	~	· · · .	~
5.	Տիւկեան)	· · · .	~~
6.	Մէկեան	○	· · · .	~
7.	Զարկեան	❖	· · · .	~
8.	Փէնճուկեան. որ պատասխանէ 1-ին	~	· · · .	~
9.	Յիւսէլնի՝ 2-ին	~	· · · .)
10.	Մէկեան կամ էվիճ՝ 3-ին	~	· · · .	~
11.	Թիզ ռաստ. կամ կէրտանիէ՝ 4-ին	✓	· · · .	~
12.	Թիզ ախւկեան, կամ մոհալէր՝ 5-ին	~	· · · .	~
13.	Թիզ սէկեան՝ 6-ին	~	· · · .	~
14.	Թիզ չարկեան՝ 7-ին	❖	· · · .	~
15.	Թիզ փէնճուկեան՝ 8-ին	○	· · · .	✓
16.	Թիզ լիւսէլնի՝ 9-ին ¹⁹	○	· · · .	✓

Թէ կամենաս՝ զոլ երաժիշտ բանիբուն,

Թին փէրտէից՝ որ ըստ խաղիցն՝ լեր նէրհուն:

111բ [166] || Հրց.— Գո՞ն այլ ևս փէրտէլք, թէ ոչ:

Պատ.— Այո, զոն այլ ևս. նեա, թիք նեա, աճէմ, կէվէշթ, բահավի,
և այլ նէրմն և թիզն²⁰:

[167] Հրց.— Գո՞ն այլ ևս խաղք, թէ միայն են սոքա:

Պատ.— Ոչ, այլ՝ զոն ևս մեծամեծ խաղք, որք, որպէս ասացաւ, յետ
և յառաջ սոցա լինին եղեալ: Բայց այսոքիկը խաղք, են իբր
սկիզբն և հիմունք հանրիցն խաղից և եղանակաց:

[168] Հրց.— Որո՞վ եղանակաւ կարեմք իմանալ փէրտէլքիցն զձայն:

Պատ.— Սոյն ութիւք եղանակօքն կարեմք լեալ վերահասու փէր-
տէիցն ընդհանրից:

ՕՐԱՆԵՍՏՈՎ



[169] Հրց.— Ո՞րպիսի սկսուածոցն եղանակաւ երգին սոքա:

Պտ.— Սոքա են Հիմն փէրտէլիցն և Համայն փէրտէլիցն ցուցանին ներ սոցուն, և սկսին ի վերին կուսէն²¹:

112m [170] || Հրց.— Նոյն ի վերոյ ասացեալ վեշտասան փէրտէլիցն զո՞ն, նաև կարելի՞ է զոլ այլ ևս փէրտէ:

Պտ.— Ոչ. այլ՝ է և եթ վեշտասան փէրտէ, յորոց քաջայալ հնարագիտութեանցն շարակազմին եղանակը Համայնք:

[171] Հրց.— Ապա ասի, թէ այլազգեաց եղանակն վեշտասանէն այլ ևս զոյ աւելի եղանակ:

Պտ.— Թէ նոցա, թէ յունաց և թէ մերում, ոչ է կարելի զոլ այլ աւելի աստիճան ձայնիցն հանրից:

[172] Հրց.— Ապա ի՞նչ է ԺԲ ձայնն, Զ ավազէն, [Ի]Դ շէօպէյն և ԽԸ թէրդիպն այլազգեաց²²:

Պտ.— Են նոքա ևս ի միջի վեշտասանիցն փէրտէլից. զի են նոքա եղանակը և ոչ փէրտէ. քանզի այլ է եղանակն, և այլ փէրտէյն:

[173] Հրց.— Զի՞նչ [է] եղանակն և զի՞նչ՝ փէրտէյն:

Պտ.— Եղանակն է այն, որ ի մէջ փէրտէլիցն լինի. և փէրտէյն է

այն, որովք եղանակք արտայօրինեալ երգին բազմազան կերպիւ և անուամբ:

[174] Հրց.— Ո՞րպիսի ձեւակերպութեամբ յօրինին եղանակք և որո՞վք նիւթովք մարմնաւորին ասութիւնք:

Պտ.— Ի ձեռն վեշտասանիցն փէրտէլից, և ոտիցն բացայայտ դրութեամբ, որ ըստ ութիցն եղանակաց և ձայնից:

[175] Հրց.— Ոտքն ի՞նչ օգուտ ունին եղանակացն:

112բ || Պտ.— Կշռադատեալ շափեն զեղանակս, որով ոչ պակաս և ոչ աւելի երգին երգք համայնք:

[176] Հրց.— Կարե՞ս դիրագոյն իմն կերպիւ ցուցանել զայն:

Պտ.— Այո, կարելի է. ոտիցն ամանակօք մի ձայնն բազում կերպիւ կարէ լինիլ, ևս բազում հնարիք երգիլ:

[177] Հրց.— Ո՞րպիսի հնարիք և ո՞րպիսի ոտիք երգի դիրագոյն ոճով և եղանակաւ:

Պտ.— Հնգավանկ ոտիցն, ութներին ամանակօք, այսու կերպիւ և այսու դրութեամբ, բազմազան եղանակաւ:

Սրի՛ երգեսցուք,
Զալի՛ ցընծացոցուք,
Երգով զանազան,
Նոր երդ ձայննացուք:
Ահա՛ երգարան,
Մերոյս ձայնարան,

Որ միշտ նուազէ՛,
Զալին զարմանազան:
Ընդ քեզ զոչեսցուք,
Զալինիւ օրհնեսցուք,
Էղպարդե՞ատոն,
Յաւէտ զովնացուք:
Ահա՛ երգարան ծաղկալի՛

[178] Հրց.— Սոյն սա երգս խազի՞ցն զօրութեամբ երգի, թէ ոտիցն:

Պտ.— Ոչ. այլ՝ ձայնիցն զօրութեամբ, որ ի ձեռն ամանակաւ ոտին:

[179] Հրց.— Ուրեմն ի ձեռն ձայնիցն ևս յօրինին եղանակք:

Պտ.— Այո, ձայնից զօրութեամբն ևս, ոտից զօրութեամբն, մանաւանդ խազիցն միջնորդութեամբ, որ ի ձեռն ձայնից, և ոտիցն կշռադատութեանց:

113ա [180] || Հրց.— Սոյն մեծավերջ քողարորը ոտիք կարելի՞ է այլ իմն եղանակ երգածայնել:

Պտ.— Այո, կարելի է. բայց պարտ է լեալ վերահասու նորին գաղտնի ելուէշականն գիտութեան:

[181] Հրց.— Ո՞րպիսի կերպիւ զոյ ի նմա գաղտնի գիտութիւն ելուիշման. և թէ ո՞չ է կարելի բացայայտել զնա:

Պտ.— Ահա դիցուք եղանակ իմն, որ փոքր ինչ ցուցանէ զդիրալուրն նորա, զոր առնէ ձայնականն զործիք, որ ըստ աղօտին՝ մու, և ըստ երկարին՝ երկ տեսումն զործէ շնչոյն հազարի ելմանն ամանակի, այսպէս:

<i>իսկ մեծ Մարիամ,</i>	<i>օղհըշտակն նըստեալ,</i>
1 2 2 1 2	1 2 2 1 2
<i>Մաղղաղնացին,</i>	<i>Ի վերա՛ զիմին,</i>
1 2 2 1 2	1 2 2 1 2
<i>Նկեալ ի իրնեկն,</i>	<i>Է ձախէր նոցա,</i>
1 2 2 1 2	1 2 2 1 2
<i>Զտէրունեան մարմին,</i>	<i>Զի լալք դիմողանին:</i>
1 2 2 1 2	1 2 2 1 2

Առ սուզն և աղօտն ըստ մի ելուզմանն շնչոյն որպիսի եղանակաւ
եթէ կամիս, և երթ ընդ երկարն, որ ընդ միոյ ելուզմանն
արտահանէ զձայն, ըստ տևողութեան ամանակի ձայնին՝ և
որ զկնի:

[182] Հրց.— Զայնիցն ո՞րպիսի կերպիւ երգին երգք:

Պտ.— Պարտ է իմաստասիրել զձայնիցն եղանակաց ըզշարն, որ
ի ներքոյ փէրտէլիցն հանրից:

[183] Հրց.— Ո՞րպէս վերաբերին նորա ի փէրտէլյան:

<i>113p Պտ. — Այսպէս.</i>	<i>աձ — օրհնեցոցք — նեա,</i>
	<i>զովիցէք — րձ — լիւսէյնի,</i>
	<i>օրհնեցէք — դձ — սէկեան կամ էպիճ,</i>
	<i>բուտէք — դձ — թիղ ուսուտ. կամ կերտանիէ, մահու,</i>
	<i>բարձր արարէք — ալ — սէկեան [կամ էպիճ].</i>
	<i>ալէլոյիս — զկ — լիւսէյնի,</i>
	<i>լուիմեան — զկ — նեա,</i>
	<i>զովիցոցք — րի — չորկեան,</i>
	<i>բարձր արարէք — ալ — սէկեան,</i>
	<i>ալէլոյիս — զկ — տիւկեան,</i>
	<i>լուիմեան — զկ — ուսուտ,</i>
	<i>զովիցոցք — րի — մեղմ սէկեան կամ արադ.</i>
	<i>բարձր արարէք — ալ — մեղմ լիւսէյնի կամ աշիրան.</i>
<i>մինչեւ ի թիղ լիւսէյնին, որ ի նմանէն ալլ ոչ զոյ բարձր փէրտէ և</i>	<i>եղանակ:</i>

[184] Հրց.— Ո՞րպիսի կերպիւ լինին եղանակը ի ձեռն ձայնից:

Պտ.— Այսու կերպիւ, կարի դիւրագոյն եղանակաւ, որ ի ձեռն
վերին փէրտէից:

զձ, ակ, զձ, ակ, զձ, ակ, զկ, զձ, զձ,
Իոկ մհծ Մարիամ մաղդաղենացին,
աձ, բձ, զկ, բկ, ակ, զկ, [զկ], զկ, բկ:
Կացեալ արտաքոլ սուրբ գերեզմանին,
ակ, զձ, աձ, բկ, ակ, զկ, զկ, բձ, զկ:
Աղի արտաստոք ողբայր զկենդանին,
բձ, զկ, բկ, աձ, բկ, ակ, զկ, զկ, բկ:
Եւ տեսեալ զհրեշտակն ի գերեզմանին:

[185] Հրց.— Ո՞րպիսի գունով եղանակեալ երգի սա:

Պտ.— Պէստէնիկեար եղանակին է եղեալ, բայց ի բազում տրամաբաշխի ի յեղանակ:

114ա [186] || Հրց.— Խազիցն հնարագիտութեամբ ո՞րպիսի կերպիւ երգին եղանակը:

Պտ.— զձ. զն վ/ կ զ/ ստ բհ վ/ բկ մ/ նաց
զձ. բա վ/ զ/ զ/ ն եալ ե մ/ բկ մ/ մ ք
բկ. ձեղ հրե մ/ մ/ բ շտակա վ/ պ օ թ/ տք
զձ. ե վ/ զ/ հրե վ/ շտա կ կ կ կ մ/ բ գ մ/ մ ա թ/ բ:

Բարունի պանծալիք՝ և գերագոյն գոյիցս,
Անտեսին տեսողք՝ և մերձաւորք արփոյն:
Պարտիս ներկրկիլ՝ հմտութեամբ խազից,
Թէ բստոր և բաց ասացես ձայնից:

[187] Հրց.— Ոտիւք, ձայնիւք և խազիւք երգին ընդհանուք երգք և եղանակք. բայց ո՞չ է կարելի, թէ զիւրալուր եղանակաւ ցուցանիցն ըստ իմիք զերգս նոցին:

Պտ.— Կարելի է, բայց դարձեալ պարտիս դիտել զներկրթումն ոտից, ձայնից և խազիցն:

[188] Հրց.— Թարց ներհմտութեանցն նոցին, եթէ կարելի է, խնդրի բացայացելդ դուն ինչ ի յոգունց:

Պտ.— Անվարժիցն համբակաց ամենայն ինչ երկի դժուարին. բայց ներկրթելոցդ իբր երգաց, լիցի բացայացտ ըստ ընդել դիտմանն երգոց

Ահա սոյն երգոց եղեալն ձայնաւորաց լեռ մտադիր, որով
սուզն, երկարն և երկամանակն որոշելով երգեա ընդ որով
և խնդրիցի ձայնիւ:

[189] Հրց.— Ո՞րպիսի կերպիւ երդին աղօտովն, երկարու և երկամա-
նակաւ ըստ դիւրին երգոցն:

Պտ.— Տե՛ս բզդիւրագոյն եղանակադրութիւն սորա, և ըստ կանո-
նագրութեան առ և երգեա սոյնալէս:

Ի վերն եղեալ տաղիս սկզբնագիրն, այսինքն կէնն, է ի
բաղաձայնիցն, և է անձայն. այրն է ի ձայնաւորացն, և է
երկամանակ. յի և րէ, են ի բաղաձայնից կիսաձայն. զօրու-
թեամբ կիսաձայնիցն, դուն ինչ կարեն արտահանել ընդ-
հանրից երգոցն ձայն: Նաև ոն է ձայնաւորացն աղօտ. նուն
է անձայն. ին է ի ձայնաւորացն երկամանակ, և այլ մնա-
ցեալըն են յայտնի: է և հնդունեայ ոտանաւոր (այս է. Կայր
կոյսն՝ ի յայրին) և ոտք մի, որոյ վերակրկնումն լինի տող
մի, և յերկրորդ վերակրկնութեանցն, այսինքն 4 ոտիցն ար-
տելեալ բաղադրի տաղ իմն, որպէս եղեալ իսկ է ի վերն:

115m [190] || Հրց.— Եթէ է կարելի, դիր այն վերոյ եղեալ տաղի եղանակն,
որով ըստ ծիսոյն իմանամբ զեղանակադրութիւն:

Պտ.— է կարելի, բայց նախապէս պարտ է ներհմտանալ ընդհա-
նուր խրատուցն եղելոց:

[191] Հրց.— Եթէ [հետամուռ] իցէ ոք, նոյն հանուր խրատուցն վերա-
հասու [լինիլ], ո՞րպիս լինիլ կարէ վերահասու:

Պտ.— Վերահասու լեալ կարող է նոքօք դիտելովն ի ձեռն խազիցն
հնարիւք:

[192] Հրց.— Ո՞րպիսի կերպիւ նոյն հնարն խազից, որով վերերգին
եղանակը:

Պտ.— Լեր նախ ձայնիցն ստոր և վերելութեանցն վերահասու, և
թիւ համարոցն, որով կարողացիս ըստ արարողութեան
ձայնի վերերգել:

[193] Հրց.— Վերահասու եղեալ երգչացն բանիրումից, ո՞րպիսի շնչաս-
պառականն եղանակի արտայօրինես բանս երաժշտականս:

Պտ.— Նըկատեմբ նախապէս ոտքն քերթողական որով և առնեմբ
ըստ երկարին՝ երկ ելումն շնչոյ հաղագին, և աղօտին՝ մի,
որ ըստ առմանն հընագոյն և ուղղացոյց երգեցողացն վսե-
մագնից:

115p [194] || Հրց.— Ո՞ր ոտիցն եղանակաւ արտայօրինի վերասացեալ Կայր
կոյսն, ոք ի Շնորհալոյն²³:

Պտ.— Ըստ դիւրագոյն ոճոյ եղանակին առնեմբ, որպէս թէ ի ցոյց
ինչ համբակացն խակավարժից, բգնդուականկն մեծավերչ
քողարորք, այսու կերպիւ:

Հայր կոյսն՝ իշխանին, կալր եւ՝ զտարճանալր:
ամէլ՝ ծընանիլ, պիսանս աղդի՝ մարդկան.

Երդեա յորում եղանակի եթէ կամիցիս, բայց սուղն դիր ի տեղի միոյ շնչավերջութեան, և երկարն երկուց շնչավերջութեանց կամ միոյ սաստկածայնութեան:

[195] Հրց.— Յաղագս ոտիցն ասի, թէ է և նմանի ուսուլիցն երգողութեան. աղա նոյնն ո՞րպիսի կերպիւ բացայայտի առ մեզ:

Պտ.— Բացայայտի նոյնն, կարի իսկ դիրագոյն կերպիւ. առ զձայնն եղանակաց, յորում եթէ կամիցիս, և ի նոյնն եղանակի ասա իբր տիւմ, դէք. բայց իմա զկերպն:

[196] Հրց.— Ռերեմն այլ ուրիշ կերպ ունի՞ ոտքն քերթողեան, որ վերաբերի երգեցողութեան:

116ա || Պտ.— Այս, ունի կերպս բազումս, որպէս ունի երգեցողութեան ի հնարս, որոյ ոմանս զկայ առեալ և ոմանս շուտափոյթ ընթերցեալ լրացուցանեն զեղանակն ձայնից:

[197] Հրց.— Նոյն զկայ և շուտափոյթ առումն ձեռամբ լինին, թէ՞ ձայնիւ երգին:

Պտ.— Լինին ձեռամբ, բայց ոչ է ի մերս արարողութիւնն այն. այլ՝ ձայնն ի տեղի ձեռացն ի զործ արկեալ ձայնադրեմք:

[198] Հրց.— Ո՞րպիսի կերպիւ լինի ձայնն ի տեղի ձեռաց. զի այլ է զործ ձայնի և ձեռացն:

Պտ.— Որպէս ձեռող աջ զնես ի տեղի երկ շնչառութեան, և ձախո՞ մու, այնպէս զելումն հազարի շնչոյդ յարմարեցո ի նոսին, որով լրացո զեղանակն սկսեցեալ:

[199] Հրց.— Նոյնն փոքր ինչ զժուարին երեցաւ առ մերն վարժութիւն:

Պտ.— Ոչ է զժուարին, այլ որպէս յայտ յանդիման տեսանի այսու ձեռվ:

Կալլը կու, ո՞, ուլոն, ի, ի, ի լալը ի, ի, ին,

դիր սկիզբն աձ-էն, և սկսեա երեք անգամ կու առնլով և այլն, որպէս եղեալ են ըստ հնարիցն իւրոց:

116բ [200] || Հրց.— Այլ ուրիշ ոտիցն միջնորդութեամբ ո՞չ լինին երգեցեալ սոյն երգաւ:

Պտ.— Լինիլ կարելի է, բայց պարտ է նկատել ըստ ընտրութեան զործոյ նոցին:

[201] Հրց.— Զդործս նոցա ո՞վ կարէ շինիլ հմուտ, և առնել ի բանի որպէս պարտ է:

Պտ.— Բանիրուն երաժիշտքն և հմտացեալքն ընդհանուր տեղեկութեանցն երգեցողութեանց:

[202] Հրց.— Ո՞րպէս զիտեն բաշավարժ երաժիշտք զնոյնս:

Պտ.— Այսպէս ասելով զիտեն, թէ մեծավերշ-անգայտն, որ է զուվ ըստ եղանակին հնդամանակ, կամ թէ մեծասար-անգայտն, որ է օ, ՝, օ, օ, կատարեն ըպնոյն ընթացք:

[203] Հրց.— Զնոսա ևս մի ըստ միոցէ բացայայտեալ ցուցանիցիս աստ, միթէ ո՞չ է կարելի:

Պտ.— Այս կարելի է, և յոյժ դիրագոյն, բայց երկարանան. զնոսա


յայտ առնեմք ի բուն տեղն, որ առ Մեծի երաժշտականութեան:

[204] Հրց.— Ըստ խազիցն ո՞րպէս երգեմք վերոյ եղեալ տաղն:

Պտ.— Ըստ խազիցն ևս երգի, գիտելով զթիւ համարոյ նոցին ըստ իւրոցն ձայնաձգութեանց:

117ա [205] || Հրց.— Եթէ խազիցն միջնորդութեամք երգեսցի, հա՞րկ է ի ձեռն ոտից եղանակել, թէ ոչ:

Պտ.— Այո, հարկ է ասացաւ, ի յոտից ո՞րն եթէ յարմարեսցի, որպէս այս երգս լինի:



Ահա յարմարեցո զոտս, և իմա զզօրութիւնս խազից, որով և երգեա ըստ մազամի էվիճ ասացելոցն, որ յայտ է հմտասիրաց. սկիզբն սէկեահէն՝ վերջն ևս ի նէրմն սէկեահն:

[206] Հրց.— Կարելի՞ է այլ կերպիւ ևս եղանակաւ երգել զոյն տաղս, թէ ոչ:

Պտ.— Այո, կարելի է, եթէ յորում եղանակի և կամեսցի երգոց:


[207] Հրց.— Որո՞վ լինի նոյնն:

Պտ.— Ի ձեռն ձայնիցն և հմտավարժութեամք խազից:

[208] Հրց.— Ուրեմն նախ պարտ է գիտել զձայնը և յետոյ զխազս:

Պտ.— Այո, պարտ իսկ է նախապէս գիտել զձայնիցն ընդհանուր տեղեկութեանց (որպէս ասացեալ է), և ապա զխազիցն իսկական ներհմտութեանց:

117բ [209] || Հրց.— Դիր ուրեմն այլով եղանակաւ ևս նոյն վերոյ ասացեալ երգն:



Ահա գկ-էն հինգ ձայն վեր, որ լինի աճէմ, ըստ փէրտէիցն, որոյ առաջին ոտքն լինի ի շնչասպառութեան դարձեալ նոյնագէս. երկրորդն՝ նեա, երրորդն՝ արագ և չորրորդն՝ մեզմ սկսուածոյն:

[210] Հրց.— Զի՞նչ է եղանակական անոն սորա:

Պտ.— Է բձ-էն կէս ձայն բարձր, որպէս յայտ է ի շարակնոցի, որ

եղեալ կան այսու ձայնիւ²⁴, այսինքն ստուգութեամբն, և որ
նշանաւն, որք են և ասին աճէմ. բայց այս է աճէմ-աշիրան:
[211] Հրց.—Սոյն վերոյ եղեալ տաղս կարելի՞ է ի յեղանակս բազումս
վերերգել:

Պտ.—Այս, զիտելով զկարգագրութիւն կանոնացն, որք ընդ առաջ
եղան, որովք լինի ի յոզումս վերերգել ի յեղանակս ի ձեռն
խաղից:

Յետամնացեալն տաղից

Կոյսըն՝ ծընանէր, կեանս ազգի մարդկան.
Զէա՝ կիցըն հօր, զկենսատու փրկիչն:

118ա [212] || Հրց.—Արդեօք կարելի՞ է միով ոտամբ և միով ձայնիւ երգել
զեղանակս բազումս:

Պտ.—Այս, կարելի է, բայց բաղդատեցմամբ ոտիցն, որ ըստ
բաղդանութեանցն, որպիսի են սոքա:

Աւե — Բարբառ աւետեաց ձայնիւ, (կրկնէ)
Գաբրիէլ գոշէր սրբուհուն:

Առ քեզ առաքիմ մաքուր, (կրկնէ)

Պատրաստեալ տեղի տէրունոյն:

Յար — Ես ձայն զասիւծուն ասեմ,
Որ գոշէր ի քառաթեին:

Ի քառաթեին գոշէր, (կրկնէ)

Զայն առնէր ի սանդարամետսն: (կրկնէ)

Յար — Մէր յառաւօտէ, (կրկնէ)
Ճեմեալ իւր անձուկ ծագմամբ:

Շագման արեելք, (կրկնէ)

Անոն այն արուսեկին:

Ած — Տուփ ես խնկալի, (կրկնէ)

Այն հոտըն որ ի քէն բուրեաց,

Բզնոգիս կու վառէ,

Տիրամայր ի մայր մըտանէ:

Վրդ — Գոհար վարդըն վառ առեալ, (կրկնէ)

Ի վեհից վարսիցն արփենից: (կրկնէ)

Ի վերայ վարսիցն սլրդարչէր,

Շաղիկ ծովային սլրդարչէր:

Լու — Ի յելս արևու արև, (կրկնէ)

Շագեցաւ մեզ յարեմտից:

Զաման արեգական ծածկոյթ, (կրկնէ)

Պետրոսէն հօտէն հալածեաց:

118բ || Յոհ — Ի յորովայնէ ընտրեալ, (կրկնէ)

Ճրգնութեամբ փրկչին հետեւալ: (կրկնէ)

Դու ոսկիրերան Յոհան, (կրկնէ)

Ի մարմնի հրեշտակ երկնաւոր: (կրկնէ)

Մար — Աշա են պարծանք ազգի մարդկան,
Քրիստոնէից միշտ պահապան,
Մինաս յազթօղ վրկայն,
Երմոգինէս նորին նըման: (կրկնէ)

Հայր — Ով սուրբ Հայրապետք ընտրեալք, (կրկնէ)
Ի մարմնի հրեշտակք երկնաւորք:
Որք վաճառեցիք ըզկենցազս,
Գրնելով զանգին մարգարիտս:

Սար — Յառաջ անեղ տեսողէ, (կրկնէ)
Յարարչէն ընտրեալ սուրբ Սարդիս, (կրկնէ)
Եւ Մարտիրոս վրկայք զօրականք: (կրկնէ)

Ի տաղիցն բաժանմանց, առ զանափէստականն, որ ունի
յինքեան առծածկեալ խառն ստեղեօք և ընդ համբոյք վեր-
շատանցեօք, այսու օրինակաւ եւ ձայնի՛ւ.

Եր-զնմք զեր-զըս, նը-համ-բիւք տաղ-դիցն:

Սա է գիտութիւն զլխաւոր և երաժշտականն ներհմտութիւն:
[213] Հրց.—Կարելի՞ է լինիլ այլ ես երգ, որ ընդ միով ձայնիւ և
ոտիւք վերերգեսցին:
Պտ.—Այո, կարի յոյժ դիւրագոյն է և միշտ կարելի, որպիսի սոյն
սա մեղեղիսա:
119ա || Սնն — Կոյս անապական և անխախտ ծնողութիւն:
Սնն — Նոր ծաղիկ, այսօր բզիսէ յարմատոյն Յեսուսայ Քրիստոս:
Սնն — Եւ որդի Դաւիթի ծնանի զորդին Աստուծոյ Քրիստոս:
Սնն — Անեղն եղանի այսօր մարդ ճշմարտապէս Քրիստոս:
Սնն — Ի լոյս անմատոյց բնակեալն խանձարրօք պատի Քրեյրի-
րի-րէ-րիստոս²⁵:
Ած — Սընար բզկենաց պըտուղն մեզ ի փրկութիւն:
Ած — Նոճի նոճ յեռից սափոր եղեգնաշէն տընկոյն:
Սնն — Նոր փրկիլ ծնաւ ձեզ օծեալ ի քաղաք Դաւիթի:
Սաղ — Նորոգին երկիր այսօր դալրստեմք փրկլին Քրիստոսի:
Յար — Այսօր տէրն յարեաւ:
Կանայք զի՞ լայք զկենդանին Քրիստոս:
Յար — Աւետիս միշտ աւետեաց հրնչումն՝
Տէրն մեր յարեաւ Քրեյրիստոս:
Յար — Երգ նոր աւետեաց բարբառ այսօր
մեզ հրնչեաց Քրիստոս:
Բեր զասքէփէական զոտս, յոր կան առ սեղմեալ համբոյքն, մե-
ծասարավերջն, անդայտն, զտեղն և երկար վանկն, այսպէս.

Եր-զես-ցուք, նը-կատ-մամբ՝ միշտ տաղ-դիցն ահ-սա-կուզ:

119բ [214] || Հրց.—Որո՞վ եղանակաւ կարէ լինիլ վերահասու երաժիշտ ոք,
եթէ կամիցի զերզս յոգունս վերերգել:
Պտ.—Ի ձեռն տեսակացն բաժանմանց տաղից, որով և գիտիցէ

զ՞նարն ոտից, որպիսի են և երգին միով ձայնիւ սոյն երգը:
 Յար — ի կոյս վիմէն յարեաւ այսօր,
 Եւ ըզգերեալսն ի գերողէն ազատեաց Քրէրիստոս:
 Ծնն — Լուաւ Եւա ըզձայն աւետեաց,
 Թէ դուստրըն քո ծընաւ զէմմանուէլն Քրիստոս:
 Ծնն — Նոր եղեմ բանաւոր տընկոյն,
 Նոր Աղամըն ի քէն հընոյն նորոգօղն Քրիստոս:
 Ծնն — Այսօր ծընար ըզբանն անմարմին ի հօրէ՝
 Սիրեցեալըն զանդրանիկ զՔրիստոս:
 Փոխ — Այսօր նորահրաշ ցընծան ժողովեալ՝
 Առաքեալըն ի փոխումըն տիրամօր (օր օր):
 Տե՛ս և գիտ զանուշ տեսակն տաղից, յորում կան ծածկեալ
 յոտից համբոյըն, ստեղն, մեծասարավերջն և անգայտն,
 այսպէս:

Ալով՝ է՛զի-տու-թիւնն նը-ւա-զաց:

[215] Հրց.— Այլես կարի բազումս կարելի՞ է երգաձայնել միով ստամբ
 կամ ձայնիւ:

120ա ||Պտ.— Այս, քանի որ Եթէ խնդրիցի, մարթ է եղանակել միով ձայ-
 նիւ, որպիսի են սոքա:
 Տն — Քրիստոս փառաց թագաւորն,
 Այսօր եկեալ յընծայումն,
 Կատարելով նա զօրէնս,
 Քառասնօրեայ զալստեամբ:
 Ծղ — Աստ երրայեցոց մանկունքն
 Զերգ ըզբրօբէիցն ասեալ,
 Հեթանոսական դասուց,
 Տօնակից վեհիցն եղեալ:
 Յար — Նըստեալ կանայքն ոզբային,
 Առ գերեզման անմահին,
 Երկելով հրեշտակին,
 Զայն աւետեաց լըսէին:
 Համ — Սոսկալի ահիւ պակեան,
 Հոյլք հոգեղինաց դասուցն,
 Տեսեալ մերունակ կերպիւ,
 Բզտէրն համբարձեալ յերկինս:
 Հող — Գոհութիւն Հոգւոյն Սրբոյ,
 Որ էջ յառաքեալսն այսօր,
 Հրաշիւք հրազինեաց զնոսա,
 Յայլ և այլ լեզուս խօսեալ:
 Վար — Լեառն ցընծա դու Թափօր
 Յարփիահրաշ տօնի,
 Քան ըզՄինա բարձրացար,
 Զաստուած փառօք ընկալար,

- Փոխ* — Այսօր սլարողին զերկինս,
 Կոյսն յերկրի աթոռ կազմի,
 Բանիւ բարձօղին զաշխարհս,
 Հանգիստ կոյսըն պատրաստի:
Խաչ — Այսօր ի ձեռքն խաչին,
 Եւ պատուական նրշանին,
 Տացուք պատիւ Յիսուսին,
 Ազատողին համայնից:
Վար — Այսօր գոշմամբ առիւծին,
 Ի քառաթև սուրբ խաչին,
 Երկըրապեմբ նրշանին,
 Այն Վարագայ սուրբ Խաչին:
 120p || *Գիւտ* — Այսօր խաչափայտըն սուրբ,
 Յայտնեալ ձեռամբ Յուղայի,
 Որ էր նա եղբօր որդի,
 Մրբոյն նախավըրկայի:
Եկեղ — Նոր դրախտին եկեղեցւոյ,
 Ծառ կենաց տընկեալ ի մէջ,
 Զոր ոչ քրովբէիւք փակեալ,
 Այլ՝ դու եղէր հուսի ի մէնչ:
Յոհ — Սա յանապատէ քարոզն,
 Գաւիթդ աստուծոյ վրկայ,
 Զոր ես մըկրտեմ ասէ,
 Է բարձօղ մեղաց մարդկան:
Ստե — Ի խաչին տընկեալ որթոյն,
 Ողկոյզ վաղաճաս խայծեալ,
 Քարամբըք ճըմլեալ գինի,
 Յոյժ ուրախարար սիրով:
Առ — Այսօր ցընծացէք եղբարք,
 Պարակից եղեալ վերնոցն,
 ՊՊետրոս և ՊՊօղոս զովել,
 Յօրս յիշատակի նոցին:
Գրի — Չայն բարձեալ յերկինս առ քեզ,
 Այսօր մեք յերկրէ գոշեմբ,
 Սուրբ Հայրըդ Գրիգորիոս,
 Մեղօք տառապեալ որդիքս:
Առ — Պաղատիմբ առ ձեզ ընտրեալք,
 Գետք առողանօղք հոգւոյն,
 Զպասքեալ ժողովուրդը ձեր,
 Մրբուցէք ի ջրոյն կենաց:
Մար — Այսօր մանկունք Սիօնի,
 Բերկրեալ ցընծան զուարձալի,
 Յիշատակաւ ձեր տօնի,
 Սուրբ մարգարէք բաղձալիք:
Հայր — Ի մեծ հանդիսի աւուրս,
 Առ քեզ պաղատիմբ Յիսուս,

- Հզհայրապետըն Յակոբ,
Առ քեզ բարեխօս ընկալ:
- 121ա || Մար — Այսօր նորահրաշ տօնիւս,
Յնծամք ընդ վկայից գործս,
Խրնդամք ձայն առնեմք մանկունք,
Միմեանց ծափս հարկանելով:
Հոփի — Այսօր բանայ սերորէն,
Զդուորն դրախտին զեղեմէն,
Եւ մըտանէ Հոփիսիմէն,
Որ զմեզ փրկեաց ի շարէն:
Հր2 — Զօրք երկնային զուարթնոց,
Դասք հրեշտակաց անմարմնոց,
Իշխանութիւնք աթոռոց,
Եւ տէրութիւնք վերնոց:
Յոհ — Ի հանդէս քո սուրբ տօնի,
Յնծամք և մեք հրճուալի,
Ո՞վ տէր Յոհան զովելի,
Ոսկերերան հրաշալի:
Մար — Պարծանք հանդիսից խըմբից,
Եւ զլուխ վրկայից սրբոց,
Արագ օդնական մարդկան,
Սարգիս յաղթօղ վրկայ մեծ:
Մար — Ի յասպարիսի մարտին,
Կրցորդ հանդիսի խըմբից,
Լեալ քեզ Մարտիրոս որդին,
Գեղեցկատիպ պատանին:
Մեծահր2 — Ի մեծի աւուր տօնիս,
Յիսոներեկի պենտէկոստիս,
Յերուսաղէմ քաղաքի,
Ի նըշանաւոր տեղին:
Բաղէ — Բանն որ ի հօրէ ծագեալ,
[Ա]
Բար — Սագմամք առաքեաց յաշխարհ,
Բաշխօղ պարզեացն ձըրից,
Ի վերուստ հեղեալ շնորհացն:
121բ || Բեր զհնդաշափ տեսակն և յարմարեցո ի սոսա. զի յոր
կան առ զանձեալ ոտս հինդ, որպէս՝ ստեղն, համբոյրն և
այլն, որ է այսու ձայնադրութեամք:

Շամամք կան եղանակը, ներսոնին սա սող եւ երկարից:

- [216] Հրց.— Գո՞ն այլ ես, կամ թէ լինի՞ն յարմար յօրինումն երգոց ընդ
իրեարս:
- Պտ.— Այո, գոն, և ելանեն յանբաւս նման՝ աննմանքն, որպիսի են
և սոքա:

- Մնն — Մոգք յարեկլից,
 Ընծայաբերք եղեն,
 Զոսկին և զկընդրուկն,
 Եւ զպատուական զրմուռն:
 Յար — Կանանցըն կանխեալ,
 Ի զերեզմանն եկին,
 Զիւղս անուշս բերին,
 Ի յօծանել բզտէրն:
 Համ — Այսօր անդրանիկ,
 Հօր միածին որդին,
 Յերկինս սըլանա,
 Աղամային կերպիւ:
 Մեծա — Նրւագեմք հոգւոյն,
 Նուազս վայելուշս,
 Վայելուշ բանիւ,
 Զարարչութիւնն նախ տսեմք:
 Հոգ — Սուրբ գալստեամք քո,
 Նոր ծաղկեցաւ երկիր,
 Վարդ անուշահոտ,
 Եւ մանուշակ բըրքում:
 Փոխ — Այսօր Գարբիէլ,
 Հրեշտակապետն եկեալ,
 Բերեալ զրբարիոն,
 Պրսակ յաղթօղ կուսին:
 Ած — Պար բոլորեցէք,
 Եկեղեցւոյ մանկունք,
 Յօրհնել քաղցր երգով,
 Զձիռն օրհնութեան սուրբ կոյս:
 122m || Առ — Արեգակն արդար,
 Որ ի հօրէ ծագեալ,
 Զառաքեալսըն քո,
 Անձառ շնորհօք լրցեալ:
 Առ — Պետրոս և Պօղոս,
 Քրիստոնէից պարծանք,
 Մեծ է ձեր հանդէս,
 Այսօր ի Հռոմ քաղաք:
 Գրի — Սրոբէից ձայնիւն
 Եղանակեմք այսօր,
 Ի յիշատակի
 Լուսաւորչին մերոյ:
 — Ի հանդէս տօնի քո,
 Բախացեալ ցընծամք,
 Հայր և վարդապետ,
 Սուրբ Հայրապետ ընտրեալ:
 — Նոր ծառոյն կենաց,
 Յանմահական դրախտէն,

- Սաղիկ վաղահաս,
Փըթթեալ բուրմամբ անոյշ:
 Կու — Կենդանի վրկայք,
Կոյսք իմաստունք և սուրբք,
Մարք մեր հոգեորք,
Սընողք յորդիս լուսոյ:
 Վահ — Յաղթօղ զօրութեամբ,
Վերնականաւ լըցեալ,
Քաջն ի զօրականս,
Երանելին վահան:
 Հայր — Բարունք պանծալիք,
Որդոց մարդկան տածողք,
Ո՞վ սուրբդ իսահակ,
Եւ վարդապետ Մեսրոպ:
 Հրշ — Գովեստ բերկրանաց,
Քաղցրաձայնեալ երգեմք,
Զեղ հրեշտակապետք,
Եւ հրեշտակաց գումարք:
 Պահ — Անդ ի մէջ դրախտին,
Երեք անձինք կային,
Աղամ եւ Եւա,
Եւ պատուիրանըն տեառն:
 Միւռ — Հայր ամենակալ,
Որ առաքեցեր,
Ըզմիածին որդիդ,
Ի փրրկութիւն մարդկան:
 122r ॥Բեր զսաֆիքական տեսակն և ընդ նմին յարմարեալ երգե
զսոյն երգս ևս, որք են հինգ ոտիւք, սոյնպէս:

Նը-։ ա-։ զեմք ըդ-նը-։ ազու եւ սը-զիւ.ք։

- [217] Հրց.— Եթէ ոք չիցէ վերահասու ոտիցն կամ տաղից դիտութեանց,
որո՞վ կարիցէ երգել զսոյն երգս:
 Պտ.— Թէ ոչ կարէ լինիլ հմուտ ընդհանուր տեղեկութեանցն դի-
տութեանցս, զոնէ վերահասու լեալ երգովն եղանակեսցէ
զհանուր բատ իւր տեսակին: Որպէս ահա զոն երգք ոմանք,
որոց են որպէս հմտացեալ. այսինքն ի յառաջին տեսակին՝
Բարբառ աւետեացն, ես ձայն զառիւծուն և այլն, ընդ
որովք վերերգեսցեն ձայնիք: Եւ այլն այսու խրատով կա-
րեն եղանակել. զկոյս անտպականն՝ յերկրորդէն, զի կոյս
վիմէնն՝ յերրորդէն, զՔրիստոս փառաց թագաւորն՝ շոր-
րորդէն, կամ զԱյսօր ի ձեռն խաշին, կամ զԱյսօր ցնծա-
ցէքն, զԱյսօր անդրանիկն, զԱյսօր Գաբրիէլն՝ հինգերորդէն
առնլով երգեսցեն միով ձայնին և երգով:

Ծնն—Յանեղական լուսնին,
 Անժաման օնին լոյսն անվայրափակ,
 Ի քնդ այարազբի՛ Մարիամ,
 Աւելախո, աւելախո, աւելախո քնս ամբամալը;
 Ծնն—Եին աշոյ՝ աշոյ ձեռին,
 Աշոյն իւր աշ, ընդ աշմէ՛ չօր,
 Չօր սնդ աշմէ՛, լուսոյն փառաց;
 Յար—Կաթողիկէ՛ հեղեղեցի,
 Ուրախ լիր բերկրեալ,
 Տէրն մեր յարեաւ,
 Քեռ մեծ աւելիու:

Սոյն երիսն է ի սրբոյն Գրիգորէ Նարեկացոյն նուազեալ²⁶,
 որոց առաջինն է ի հնդավանկ եղանակին, երկրորդն և եր-
 րորդն են սաֆիքականն եղանակի, և յօրինեալ ըստ ծիսոյ
 երգոցն, որ յայտ է:

[218] Հրց.— Միթէ ո՞շ է կարելի տաղերգութիւնքն ևս երգեսցի միով
 ձայնիւ և միով ոտիւք:

Պտ.— Այո կարելի է զի մինն՝ երկու, երեք և այլ աւելի ձայնիւ
 եղանակաւ երգել, որպիսի ևն սորա:

Յար — Գոշէր հրեշտակն առ վիմին,
 Վասն յարութեան Յիսուսին,
 Կանայք դուք զի՞ զարհուրիք,
 Լալով խնդրէք զկենդանին:

Ած — Խընկին ծառին՝ նըման ես,
 Պըտուղ դու քաղ՝ ցրահամ ես,
 Զրարի պըտուղ՝ բերեալ ես,
 Աստուածածին՝ մեղայ քեզ:

Ած — Առաջնանաշակ պըտղոյն,
 Մահուանն առաջին մարդոյն,
 Եղեր անիծից լուծիւ,
 Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Ած — Բարձօղ եղեր՝ անմահին,
 Եւ բնակարան՝ հօր բանին,
 Մընար զորդին միածին,
 Մայր լուսոյ աստուածածին:

Սաղ — Այսօր ցընծան՝ արարածք,
 Խըրախճանապէս՝ օրհնութեամբ,
 Երկինք և երկիր՝ պար առեալ,
 Մափրս ծափի՝ հարկանեն:

Յար — Քրիստոս խաչեալ՝ ի փայտի,
 Յերուսաղէմ՝ քաղաքի,

- Եղաւ ի նոր՝ տապանի,
Զոր էր փորեալ՝ ի վիմի:
- 123ր || Հրց — Զօրք երկնային՝ զբարթնոց,
Դասք հրեշտակաց՝ անմարմնոց,
Իշխանութիւնք՝ աթոռոց,
Եւ տէրութիւն՝ նրք վերնոց:
- Ստփ — Նըստեալն յառնէր՝ ցուցանել,
Վերին հրեղի՝ նացն դասոց,
Տեսէք զհողե՝ դէն բնութիւն,
Վասն իմ շարշարեալ մարմնով:
- Առ — Պաղատիմք առ՝ ձեզ ընտրեալք,
Գետք առոգա՝ նողք հոգոց,
Զպասքեալ ժողովուրդը ձեր,
Արբուցէք ի ջրոյն կենաց:
- Աշխ — Ուրախ հարսն լեր՝ ի յերկրէ,
Բերկրեալ դշխոյ՝ յաշխարհէ,
Այսօր ցընծա՝ և պարէ,
Քրիստոս ըզքեզ՝ պրսակէ:
- Հայր — Աստանօր վր՝ տակ հոսեալ,
Ով տէր սուրբ Յակոբ ընտրեալ:
Զորդիս քո զե՛րի վարեալ,
Զտօնքս հանդի՛սի ցրուեալ:
- Խաչ — Աստուածածին՝ սրբուհին,
Ամէնօրհնեալ՝ տիրուհին,
Կայր առ խաշին՝ Յիսուսի,
Եւ արտասուէր՝ տրտմալի:
- Խաչ — Յովսէփ Արեմաթացին,
Առ Պիղատոս՝ Պոնտացին,
Խնդրէր ըզնազովրացին,
Զպատապարտեալն ի խաշին:
- Շող — Նախ միածին՝ աստուածըն քան,
Իջնալ յերկնից՝ առնանման,
Ուռն ի ձեռին՝ ոսկէնման,
Սաստիկ տեսիլն՝ ահեղական:
- Յար — Յայնծամ սիրով՝ տիրական,
Լըցեալ կանանց՝ խնդրութեամբ,
Գան առ Պետրոս՝ Յովհաննէսն,
Եւ սիրեցեա՛լըն Յոհան:
- Ահա սոյն սա տաղերգութիւնքն ընդ մեծավերջ ոտիւք վերերգին ըստ իւրն յարմար յերիւրման, կարի յոյժ զիւրագոյն ձեօք. նաև յայտ է նախեղեսու տաղիցն երգօք:
- 124ա [219] || Հրց.— Արդեօք զտանի՞ն այլ և տաղերգութիւնք, որ երգեսցին ընդ միոյ եղանակաւ:
- Պտ.— Այս, զտանին քանի ինչ ձեք, զորս դիցուք ըստ կարգի յարմարութեան:

- Ծնն — Տունկ անմահութեան,
 Բողբոշեցար սուրբ կոյս,
 Սաղկաբար ծընար,
 Զանմահ պըտուղն Յիսուս:
 Առ — Այսօր Գաբրիէլ
 Հրեշտակապետն եկեալ,
 Բերեալ զբրաբիոն,
 Պըսակ յաղթօղ կուսին:
 Յար — Կանանցըն կանխեալ,
 Եկին ի գերեզման,
 Զիւղս անոյշս բերին,
 Ի յօծանել բզտէրն:
 Համ — Այսօր անդրանիկ
 Հօր միածին որդին,
 Յերկինս սըլանայ
 Ադամային կերպիւ:
 Հոգ — Այսօր սուրբ Հոգին
 Աստուած եկեալ յաշխարհս,
 Յաշխարհս հնչեաց
 Բզձայն որոտման մեծի:
 Մար — Բանաւոր ծառոց
 Երենցան ծաղիկք,
 Երփնազարդ գունով,
 Անուշահոտ բուրմամբ:
 Եշրթի — Տէրըն կատարիչ,
 Հին օրինաց ուխտին,
 Բզգառըն կերեալ,
 Բնդ բաղարջի հացին:
 Առ — Նոր լոյս յարփենոյն
 Վառեալ որդիքն որոտման,
 Որդոց Սիօնի
 Մագեն աւետարանաւ:
 Առ — Յակոբոս ընտրեալ
 Վըկայ որդի Յովսեփայ,
 Բոտ մարմնոյ փրկչի
 Մերոյն մեսիայ:
 124p || Առ — Պետրոս Պօղոս,
 Քրիստոնէից պարծանք,
 Մեծ է ձեր հանդէս,
 Այսօր ի Հոռմ բաղաք:
- Տաղթ այլ իմն կերպիւ
- Յար — Դասքըն Հրէական,
 Էին պահապան
 Սուրբ գերեզմանին,

Յոր եղաւ՝ մարմինն աննման:
 Յար — Տեսեալ Մարիամ
 Զտէրըն ի պարտիզին,
 Ողբալով ձայնէր
 Պարտիզան՝ ո՞ւր է իմ որդին:
 Յար — Յայն առաւօտին,
 Միաշաբաթին,
 Լուսափայլ հրեշտակն
 Էր նստեալ՝ ի վերա վիմին:
 Եշրթի — Աստուածն ամէնի,
 Միածինն որդի,
 Կամաւ Հօր հոգւոյն
 Ճշշմարտի՝ յերկիր խոնարհի:
 Ուր — Լըցան բանքն այսօր,
 Սուրբ մարգարէիցն,
 Ածեալ կացուցին,
 Զտէրըն յատեանըն Պիղատոսին:
 Յար — Ո՞վ պարտիզապան,
 Ասա՝ ո՞ւր տարան,
 ԶՅիսուս կենդանին,
 Որ կարծեմ՝ թէ դու ես նըման:
 Հայր — Անձառ միածին,
 Հօրն երկնաւորին,
 Ընտրեալ ի յերկրէ
 Սուրբ Յակոբ՝ քրոբէ մարմնաւոր:
 Ած — Անձառին խորան,
 Բանին բնակարան,
 Գովեալ Մարիամ
 Սրբուհի՝ դու վարդ անթառամ:
 Ած — Սրեւ լուսատու,
 Տաճար աստուծոյ,
 Բանին բարունակ
 Մարիամ՝ անթառամ վարդոյ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գալուստյանի ինքնագիր օրինակում, անտարակույս, աշխատության խորագիրն ավարտվել է այստեղ: Հաշորդ խոսքերը («Չարազրեցեալ յումեմնէ բանասիրէ» և այլն), ավելացրել է զաղափարող զրիւր, տեղեկություն չունենալով աշխատության հեղինակի մասին:

2. Հաշմի առնելով «Նուազականի» մասին հեղինակի տված հետազա բացատրությունը (տե՛ս բնագրի 3—6-րդ հարց-պատասխանները), կարող ենք հաստատել, որ այստեղ, Գալուստյանը, թեև ոչ հստակ, տարրերում է մանողիկ երաժշտության երեք հիմնական կողմերը՝ ելեկչային, կշռույթային և զարդուրումնային: Սրա օգտին են խոսում նաև հետեւյալ փաստերը՝ «Եղանակ» բառի երաժշտական առաջին նշանակությունը դրաբարում եղել է՝ բանական և մետրոն (տե՛ս նոր բազիրք Հայկազեան լեզուի): «Սրինդ» խոսքից հնուց ի վեր ունեցել ենք մի բայ, սորնդելք՝ «Հանել զձայն սրնդի» առաջնային իմաստով (տե՛ս հիշյալ բառզիրքը): Եվ միջնա-

զարյան մանրուաման ճախ զարդուորված գծ մի եղանակ, ինչպես նկատել է դեռևս Ս. Ամատունին, կոչված է եղել «սրբնոց» (տե՛ս նրա՝ «Հայոց Բառ ու Բան»):

3. Այս հարցը հայ երաժշտական գեղագիտության մեջ հին պատմություն ունի: Վաղ միջնադարում Գավիթ Քերականը փաստորներ նույնպես երկուսի բաժանելով երաժշտական արվեստը, եկեղեցական երգը համարել է ոչ միայն «հոգեոր»՝ այլև «բարի», «կայուն» և «հասարակաց», ի հակադրություն աշխարհիկ (Հեթանոսական) երգի, որն իմաստասերը անվանել է «շաբ» կամ «միջակ» (նայած տեսակին) և «անցական» ու «առանձին» (տե՛ս մեր «էջեր հայկական վաղ միջնադարյան երաժշտական գեղագիտությունից» Հոդվածը, Հայկ. ՍՍՀ ԳԱ-ի «Տեղեկագիր» (հաս. պիտ.), Երևան, 1961, № 2): Զարգացած ավատափրության շրջանում զգալի մեղմանում է աշխարհիկ երաժշտության նկատմամբ հումք ցուցաբերված այս վերաբերմունքը: Հովհաննես Պլուտ Երզնկացին պատշաճ է համարում երաժշտությունը բաժանել «առողմային» ու «մարդկային» տեսակների, վերջինիս տակ հասկանալով ավատափրութական ազնվականությանը ծառայող զուսանների երգը, որ կատարվում է «ի ժողովու խրախութեան և յուրախական հանդէսան» (տե՛ս մեր «էջեր միջնադարի հայկական երաժշտական գեղագիտությունից» Հոդվածը, «Էջմիածին» գուսանների, 1963, № 11): Հայկական ուշ միջնադարը հիմնականում ժառանգում է Երզնկացու սույն դրույթը (ինչպես և Գավիթ Քերականի մտքերը՝ Երզնկացու միջնորդությամբ), ու ենելով նոր իրադրությունից, ընդլայնում և մեղմացնում է այդ դրույթն այսպիս, որ աստվածայինից հետ միասին ընդունելի համարվի նաև «մարդկային» աշխարհիկ արվեստը՝ ամրազությամբ առած՝ պայմանով, որ վերջինս «պարկեշտ» կամ «համեստ» լինի բարոյագիտական նիրգործության տեսակետից: Այս պաղապարը, որ շատ հստակ արտահայտել է տակալին Խաչառու էրգրումեցին (տե՛ս մեր «Խաչառու էրգրումեցին սրբս միջնադարյան հայ երաժշտության տեսաբան» Հոդվածը, «Էրարեր» 1966 № 11), յուրովի ամրողական տեսության է վերածել Գր. Գաղասարալյանը և նույնությամբ կրկնել իր հնուազա գործերում ևս (հմմտ. «Գիրք երաժշտական», Կ. Պոլիս, 1803, էջ 11—12):

4. Հին հունական լիդիական կոչված ձայնեղանակն է հիշատակվում այստեղ, որպես աձ. Մնացած Երեք՝ բձ. գձ. և դձ. ձայնեղանակների անունները՝ հունական դասական թվականներ են. Համապատասխանաբար՝ դեւտերությունը=ծնություն, տախոսությունը=տեսքություն:

5. Մի քանի անգամ պատահող այս արտահայտությամբ («ի Մեծի երաժշտականության») հեղինակն անկասկած ակնարկում է իր մեկ այլ աշխատությունը, որ է ամենայն հավանականությամբ՝ Տրդ. եպ. Պալյանի նկարագրածը (տե՛ս «Հանգս ամսօրյա», 1895 № 3, էջ 65 և № 4, էջ 123): Այդպես է, քանի որ «Գիրք երաժշտականի» էջերում ևս հեղինակը ընթերցողին գեպի իր շորրորդ աշխատությունը հզելու առիթներ է ստեղծում (տե՛ս, ասենք՝ էջ 31, «Յաղապահթուոսի երաժշտականության» գլուխը), այն համարելով ամենածավալուունը, ուր հարցերը լուսաբանվում են առավել հանգամանորներ: Եթ ափսոս, որ ճիշտ այդ աշխատությունն է անգարձ կորնլը:

6. Մերձարևելյան երաժշտարվեստի հիմնական հնչյունաշարի աստիճաններն է հիշատակում հեղինակը, գործածելով ուշ միջնադարում ընդհանրացած տաճկական անվանումները: Ստորև բերում ենք այդ հնչյունաշարի լրիվ կազմը, վերծանությամբ հանդերձ (օգտվելով ձայնաստիճանները լատինական տառերով նշելու՝ երաժշտության տեսության մեջ ընդունված սկզբունքից):

1. Եէկեան, մեզմ գէնճուկեան	d ¹
2. Մեզմ յիւսէյնի կամ աշիրան	e ¹
3. Մեզմ սէկեան կամ աբադ	(—)fis ¹
4. Ռաստ	g ¹
5. Տիւկեան	a ¹
6. Մէկեան	(—) h ¹
7. Չարկեան	c ²
8. Փէնճուկեան կամ նես	d ²
9. Յիւսէյնի	e ²
10. Մէկեան կամ էջիճ	(—)fis ²
11. Թիդ ռաստ կամ կէրտանիճ	g ²
12. Թիդ տիւկեան կամ մուհայէր	a ²
13. Թիդ սէկեան	(—)h ²
14. Թիդ չարկեան	c ³
15. Թիդ փէնճուկեան	d ³
16. Թիդ յիւսէյնի	e ³

Սրանք բնուղիդ (դիատոնիկ) հնչյունաշարի աստիճաններն են: Գոյություն ունեն նաև շուրջ նույնքան ձեւափոխված կամ ածանցված աստիճաններ (դրանցից Գալասաքալյանը հիշատակում է լոկ մի-երկուաը՝ շորիզան (=dis¹), անկմ-աշիրան (=eis¹), կելլէր (=+(+)isi¹), սլուելիր (=his¹), անկմ (=eis²), մահուր (=+(+)isi²), որով հիմնականում լրանում է մերձարևելյան երգ-երաժշտության մեջ օգտագործված ձայնատիճանների միակցությունը: Վերջինս ներկայացնում է երաժշտական յուրահատուկ հնչակարգ: Նրանում, ի տարրերություններովական լավ հավասարեցված հնչակարգի, eis-ը և his-ը հավասար չեն, համապատասխանաբար, ի-ին ու օ-ին: Եվ ընդհանրապես, այստեղ բարձրացման միջոցով ձեւափոխված (կամ ածանցված) աստիճանները՝ էնհարմոնիկորեն իրենց հավասարեցվածներ կամ իշեցման միջոցով ստացվող համապատասխաններ չունեն: Բացի դրանից, այստեղ կան և աստիճաններ, որոնք իրենց բարձրությամբ պարզապես չեն համընկնում լավ հավասարեցված հնչակարգի համապատասխան աստիճանների հետ, լինելով մի փոքր ցած (—), կամ մի փոքր բարձր (+):

7. Զայնեղանակների հեգման (այսինքն՝ դրանց էշելների յուրացման) այս ձեր հնիթագրում է վերը բերված հիմնական հնչյունաշարը վարժ պատկերացնել, դեպի վեր աձ-բձ-դձ-դձ, ու դեպի վար՝ ակ-պկ-դկ-րկ հաջորդություններով, հետևյալ կերպ:

Դիտարկվող օրինակում, ուր «ձայն» և «կողմ» նշումները տարրերվում են նաև դրանց վրայից դրվող «րենկորճ» և «փուշ» խաղերով, առաջին «աձ»-ն համապատասխանում է Ժ-ին:

8. Աշխատության մեջ, նայած կապակցության, հեղինակը մի քանի իմաստով է դործածում «եղանակ» բառը: Առհասարակ «կերպի» նշանակությամբ, «մեղիղի» կամ «ելեկչի» նշանակությամբ, և «կշռույթի» իմաստով, որպիսին է պարզապես այստեղ, 70-րդ հարցում, ուր խոսքը վերաբերում է ութ ձայնեղանակներին: Ընդհանուր առմամբ այդ են վկայում նաև հաջորդ (71-րդ) հարցի պատասխանում առաջ բերված ութ պայմանական խոսքերի խաղավորումները:

9. Ընդհանրապես «ձայն» բառը կիրառելով «ձայնեղանակի» (գլաս) իմաստով, այստեղ ու մի-երկու այլ դեպքերում հեղինակն այն գործածում է «ձայնաստիճանի» նշանակությամբ ևս:

10. Ողջ աշխատության մեջ հեղինակը գործածել է ընդհանուր արևելյան (մերձարևելյան) իրաժշտական մի շարք տերմիններ, որոնք մեկտեղելով այստեղ, բերում ենք այբբենական կարգով, իրենց նշանակությամբ հանդերձ:

Ավագէ—հնչյուն, ձայն, եղանակ, շափանմուշ եղանակի տեսակ:

Դէր—արևելյան երաժշտության շափակշռույթային համակարգին հատուկ երկու գլխավոր զարկերից մեկը՝ թեթև զարկ:

Թէրդիպիպ—համադրում, կանոն, շափանմուշ եղանակի տեսակ:

Թիզ—սուր, բարձր:

Ղանուն—բանոն:

Մագամ—տիպական մեղեղի, շափանմուշ եղանակ, 12 «դասական» առաջնային ձայնեղանակների ընդհանուր անվանակությունը:

Նէրմ—մեղմ, ցած:

Նիմ—կես, կիսաձայն, կես ձայն:

Շէօպէ—մագամներից ընձյուղած շափանմուշ երկրորդային եղանակների ընդհանուր անվանը:

Չէշնի—համ, ճաշակ:

Վէղն—կշռ, շափ:

Տիմ—շափակշռույթային համակարգին հատուկ երկու գլխավոր զարկերից մյուսը՝ ծանր զարկ:

Ռէտուլ—շափակշռույթային տիպական բանաձև:

Փէրտէ—մատնատեղ (լարային կամիթահար նվազարանի կոթի վրա):

Նիմ փէրտէ—կիսաձայնի կամ ածանցյալ աստիճանի մատնատեղը, կես ձայն, կես աստիճան:

11. Ոտանավորի տեսակներին վերաբերող երկու-երեք ածականներից, որոնք գործածված են այսօնի, «անուշը» պիտի բացատրել հայերենով, այդ խոսքի ուղիղ, բառարանային իմաստով: «Ասրլէֆէականը» ծագում է մ.թ.ա. VII դարում ապրած հույն բնարերգու Asclépiade-փառանից (տես Petit Larousse, Dictionnaire Encyclopédique, Paris, 1966): «Մաֆիզականը» դարձյալ զոյացել է հին հույն բանաստեղծունի (և երաժիշտ) Մատֆոյի անունից (Տառչո—տես Փ. Բրոկգայզ և Ի. Եֆրոն, Էնցիկլոպեդիական համարական տարբերակ, Հայոց կարենության մեջ՝ ապահոված է առաջի ինչպես սույն, այնպես էլ մյուս բոլոր տեսակների շափակշռութային-շեշտադրական կազմությունը:

12. Արարական դասական տաղաչափության մեջ ընդունված՝ շափակշռութային-շեշտադրական ամպական բանաձևեր:

13. Բնապրում՝ «մակեռնակն», որ ակնհայտ վրիպակ է:

14. Տաղաչափական ոտքերի տեսակների, նույնիսկ երաժշտական կշռութաձևների ծագումը օրվա ժամերի հետ կապելը հինավորց գաղափար է, որն անցյալում այլևայլ կերպ է հիմնավորվել: Ըստ Թամբուրի Հարութիսի հաղորդած տվյալների, օրինակ, դա բացատրվում է նրանով, որ օրվա տարբեր ժամերին մարդու սիրտը տարբեր կշռութով է բարախում (տես Տամբուրատ Արյուսի, Ռуководство по Восточной музыке, աշխատություններ Ն. Թահմիզյանի, Երևան, 1968, էջ 107, այսուհետեւ Տամբուրի):

15. Մեղեդիական վերընթաց ու վարընթաց բայլեր ցուցանող («վերելեակ» և «ստորիշեալք») նշանների, ինչպես և հաջորդ՝ 155-րդ հարցում բարձրացվող՝ աստիճանական ու թոփշրածե շարժումներ և նախորդ հնչյունի կրկնությունը արտահայտող («ձարմին», «անմարմին» և «ոչ մարմին անմարմին») նշանների կիրառության մասին դրույթները փոխառնելով բյուզանդական նեմագրությունից, Գալաստարայինը ձգտում է արմատագործ դրանք նաև հայկական խաղաղության մեջ:

16. Մրանք «վերելեակ» կոչված նշաններն են:

17. Այս «մեծամեծ խազը» կոչված նշանները, որոնց պաշտոնն է՝ կարգավորել մեղեդիի ուժային (զինամիկ) և կշռութային նրբերանդավորումն ու կատարողական արտահայտչականությունը, նույնպես բյուզանդական նեմագրության իրակություններից են, և դրանց զգայի մասի դորությունը մութ է ցայտը (Հմմտ. E. Wellesz, A History of Byzantine Music and Hymnography, Երկրորդ հրատ., էջ 297):

18. Բնապրում «եէկեահը» և «մեղմ փէնճուկեահը», որոնք նույն ձայնաստիճանն են ներկայացնում, համապատասխանելով ելքութական Ժ-ին, առանձին են համարակալված: Դա գաղափարող գրչի կողմից թույլ տրված մի թյուրիմացություն է, որով ընազրում խառնվել են ձայնաստիճանների թվահամարները: Այդ մասին կարելի է դատել թեկուզ նրանից, որ հիշյալ թյուրիմացության պատճառով խնդրո առարկա ձայնաստիճանների («վերտէնների») թվարանակը ձեռագրում բարձրացել է 17-ի (և սկսած «փէնճուկեահը» ու մինյակային ցած ձայնները համարկալվել են 2—10) այն զեպքում, երբ աշխատության մեջ պարզ խոսվում է «վեշտասան փէրտիից» շուրջ:

19. Խաղագրության այս սկզբունքը, որ ձգտել է ներմուծել Գալաստարայինը, դարձյալ ենթադրում է առկա հնչյունաշարի միևնույն աստիճանը տարբեր նշանով արտահայտել, նայած ելեկահին ինչպիսի կառակցության մեջ է հանդիպում: Վերընթաց, թե՛ վարընթաց: Ըստ այդմ է՝ ողջ հնչյունաշարը զեպի վեր հաստատագրվում է «վերելեակ», իսկ վերից վար՝ «ստորիշեալք» կամ «ստորիշեալք» խաղերի օգնությամբ: Եվ որովհետեւ առաջիններն ընդունեն 10-ն են, երկրորդները՝ 9-ը (մինչ ձայնաստիճանների թվարանակն է 16), հեղինակը մի ամբողջ շարք կետավոր «բաշ»-եր է օգտագործում թե՛ զեպի վեր, և թե՛ զեպի վար ընթացող շարքների մեջ:

20. Փոքր-ինչ մշուշապատ է, և կամ աղճատված է սույն որատասխանը: «Նէրմն» և «Սիզն» ասածը՝ հիմնական հնչյունաշարի աստիճանների ու մինյակային (օկտավային) ցած ու բարձր կրկնություններն են: «Նէրմն» նոր աստիճան չէ, այլ՝ «փէնճուկեահը» (Ժ2) մի ուրիշ անվանումը: «Աճէմ» ու «կէվէշի» հնչյունները ձևափոխված (ածանցյալ) աստիճաններ են, ինչպես նշել ենք: Իսկ «Բահալիին» ոչ թե ձայնաստիճանի, այլ շափանմուշ եղանակի անուն է, որպիսիք են նաև աշխատության մեջ ուրիշ ասիթներով հիշտակվող հետեւյալ չորս անվանակոչումները: «Պէստինիկեար» (Հրց. 185), «Եզիճ» (Հրց. 205) և «Աճէմ» ու «Աճէմ-աշիրան» (Հրց. 210): Սույն եղանակների ելեկահին ընդհանուր շրջագծերը տե՛ս Տամբուրիտ, գլ. А:

21. Այստեղ ճախարակածն ըերված սույն վարժությունը նշեցնելու գործնական կերպի մասին (սկսելով «ի վերին կուտէն») ճիշտ դադարար են տալիս 183-րդ հարց ու պատասխանը (տե՛ս):

22. Արևելյան երաժշտության տիպական առաջնային (մագամ կոչված) ու երկրորդային (ավագել, շեռայի և թերզիպ անվանվող) եղանակների համակարգի մասին է այստեղ խոսքը: Այն՝ իր հին, այսպիս առնենք՝ դասական ձեմ մեջ ներկայացրել է 12 մագամ, 6 ավագել ու 24 շեռայի միայն (տե՛ս Տամբուրիտ, էջ 135, ծանոթ, № 18): Հետագայում սակայն, և հատկապես ուշ միջնադարում, մեղեդիական հարստությունների անընդհատ կուտակման պայմաններում, հիշյալ համակարգը տարրեր փոփոխությունների է ենթարկվել, որոնցից մեկն էլ՝ Գալասարալյանի այստեղ հիշատակածն է: Ի դեպ, ավագենների թվարանակը սխալմամբ է (7) է նշված: Եփոթն, անշուշտ, առաջնային է ավագել խոսքի առաջին նշանակությունից, որ է՝ երաժշտական հնչյուն (որտեղից ե՞ւ 7 ավագել, այսինքն 7 հիմնական հնչյուն արտահայտությունը):

23. Այս երգը, որ Գալասարալյանը հատկացնում է Շնորհալուն, իրականում պատկանում է Սրբկ Կոստանդի գրչին (Հմմտ.՝ Մատենադարան, ձեռ. № 8188, էջ 63r):

24. Խոսքը փաստորին ըկ. (Ա. Ելմ) ու ըկ. դարձվածք (Անեմ-աշիրան) եղանակների մասին է:

25. Այստեղ (և մի-երկու նման դեպքերում) «Քրիստոս» անվան մեջ մուծվել են մեր կելծ կուշած այն վանկերը, որոնք վոկալիզացիաներում ծառայում են որպես ձայնի հատուկ հենարաններ (տե՛ս մեր «Հիմնական դրույթներ խազագրության արվեստի վերաբերյալ» հոդվածը, «Բանրեր Մատենադարանի», 1971, № 10, էջ 145):

26. Առաջ ըերված տաղերից երրորդի (Հարության՝ «Կաթողիկէ եկեղեցի») հեղինակը մեղ անհայտ է: Երկրորդը (Մննդյան՝ «Էիքն աշոյ») իրոք Գր. Նարեկացու ստեղծագործությունն է, որ հանրահայտ իսկ է: Իսկ առաջինը («Յանեղական լուսոյն») պատկանում է Հովհաննես Պլուդ Երզնկացու գրչին, ինչպես ցույց են տալիս մեր Մատենադարանի ձեռագրերը (Հմմտ. Ա. Մրադյան, Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958, էջ 238—39 և 279—80):

Н. К. ТАГМИЗЯН

НЕИЗДАННЫЙ «КАТЕХИЗИС МУЗЫКАЛЬНОЙ НАУКИ» Г. ГАПАСАКАЛЯНА

(Р е з ю м е)

Гр. Гапасакалян, поэт и музыкант второй половины XVIII в., является первым ученым нового времени, уделившим должное внимание теоретическим вопросам армянского средневекового песнетворчества. Его перу принадлежат четыре музыковедческих труда, из которых первый и третий издавались в свое время («Песенник», 1794 и «Трактат о музыке», 1803, Константинополь). Четвертое сочинение автора утеряно во время первой мировой войны. А второе—публикуемый «Катехизис». Он дошел до нас в одном списке прошлого столетия, не содержащем указания на авторство. Оно устанавливается посредством всестороннего изучения содержания, манеры изложения и языково-стилистических особенностей труда. Гапасакалян многое унаследовал от средневековых армянских теоретиков. Эта особенность свойственна и настоящему «Катехизису». В нем автор, после вступительных замечаний музыкально-эстетического порядка, толкует об армянском восьмигласии, о метро-ритмических основах армянского духовного песнетворчества

и о новой (им реформируемой) системе хазовой (невменной) записи напевов. Новое в этой системе (в сравнении с средневековой) сводится к стремлению теоретика музыки придать целому ряду хазов значения точных интервальных шагов.

N. K. TAHMIZIAN

LE "CATÉCHISME DE LA SCIENCE MUSICALE"
INÉDIT DE G. GAPASSACALIAN

(R é s u m é)

Grigor Gapassacalian, poète et musicien de la seconde moitié du XVIIIe siècle, est le premier savant de la période moderne qui ait accordé l'attention requise aux problèmes théoriques des œuvres musicopoétiques arméniennes du Moyen Age. Quatre ouvrages musicologiques appartiennent à sa plume, dont le premier et le troisième ont été édités à l'époque (*Livre musical*, 1794, et *Traité sur la Musique*, 1803, Constantinople). Le quatrième ouvrage de l'auteur a disparu au cours de la Première guerre mondiale. Le deuxième est le "Catéchisme" publié ici. Il nous est parvenu dans une copie du siècle passé ne comportant aucune indication concernant l'auteur. La paternité de l'ouvrage est établie par l'étude approfondie du contenu, de la forme d'expression et des particularités linguistiques et stylistiques. Gapassacalian a hérité d'un grand nombre d'éléments essentiels des théories musicales arméniennes médiévales. Cette particularité est propre également au présent "Catéchisme". Après une introduction de caractère musico-esthétique, l'auteur y parle de l'oktoéchos arménien, des principes métro-rythmiques des chants liturgiques arméniens et du nouveau système (réformé par lui-même) de la notation neumatique (de khazes) des mélodies. La nouveauté de ce système (par rapport au système médiéval) consiste dans le désir du musicologue de donner à toute une série de khazes la signification de pas-intervalles exacts, c'est-à-dire qu'il tend à en faire un système diasthématisque.